

ԱՐԵՎԵԼԵԱՆ
Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍԵԱՅ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1874

ՕՂՈՍՏՈՍ

ՊԱՐԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ Ի ԳԵՐՄԱՆԻԱ
ՊԵՏԱՌՈՒԹԻՒՆ
ՊԷՏԵԼԵՆԲԱՆԻ ԿՈՄԵՏ ԵՂ
ԲԱՐԱՀՈՒԹԻՒՆ
ՄԻ ԽՈՍԷ ԼԵՌՆԵ ԶԻ ՎՐԱՅ
ՀԱՍԱՐԿԱՅ ԿՐԹՈՒԹ
ԿՈՂԱԲԱՐԱՆ
ԱՄՈՒՐԻՒ ԵՂ ԵՐԱՋՆԻԸ

ԶՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԼԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Դ. ՏԱՐԻ

1874

ՕԳՈՍՏՈՍ

ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԱՐԹՈՒԹԻՒՆ Ի ԳԵՐՄԱՆԻԱ*

«Մանուկը՝ տղոց պարտիզէն ելնելէն ետեւ՝ դպրոց կ'մանէ : Կրթութիւնն պարտաւորական կ'ըսուինայ ՚ի Գերմանիա 6 տարեկանէ մինչև որ մանուկն իր առաջին հարրոգն առնու, առ նուազն 14 տարեկան եղած ատեն . այս ու թամեայ պարտաւորական աշակերտութեան ժամանակը , թէև դիշերթթիկն դրեթէ անձանթթէ ՚ի Գերմանիա , հօր և ընտանեաց իշխանութիւնը դրեթէ բոլորովն մանկավարժին կ'անցնի . այն հայրն՝ որ իր սրգին գպրոց դրիելլու անհոգ կ'մնայ , կամ ատեն ատեն անոր դասաւորթեան արդելք կ'լինի , նախ սուղանայ կ'դատապար-

տուի, ևս պա բանտի. պարտաւորութեան օրէնքը խլատ է, և ծանր ծանր պատիժներ դրուած են որ անոր անաշու զործադրութիւնը կ'ապահովեն: Արթուրիւնը միայն աղքատներու համար ձրի է, ըստ ուրոշման թաղական խորհրդայ:

Այն տղաք որ միայն պահանջուած կրթութիւնը կ'ազեն՝ ժողովրդային վարժատունները (volkschule) կ'երթան. իրենց ընդունած ուսման հրահանդէս են՝ ընթերցանութիւն, դրամարժութիւն, հաշիւ, պատմութեան և աշխարհագրութեան տարերբը, քանի մը գործնական զիտելիք, դժադրութիւն, երգ: Աղջիկներն ևս այս կարգի վարժատուններ ունին. քաղաքներու և գիւղերու գալորոցներն այսպէս բաւական կրթութիւն կ'հայթայթեն ամենէն անդրադէտ անձերու:

Ճարտարական կամ աղտարական արդեստներու փափաքող մանկտին՝ իւր քաքանչիւրն իրեն յատուկ գալորոցն ունին. առաջիններն՝ որ դրական կատարեալ ուսման պէտքը չունին, Ճարտարական (realschule) վարժարանները կ'դիմեն, միւսներն քիմիականներուն (ուսումնարան) մէջ անթերի կրթութիւն կ'ստանան:

Ճարտարական կամ արդեստագիտական վարժարանն՝ ի Գերմանիա, մեծ կարեւորութիւն ունեցող հիմնարկութիւն մ'է, ուր այս ժողովրդեան գործնական ոգին բացայայտ կ'երևի: Աւսուցիչը 10 տարեալ տեւելու կերպով կարգադրուած են, այնպէս որ անդ մանող 7 տարեկան տղան որ կարգալ ու գրել չգիտէ, 17 տարեկան կ'ենէ անտի, ամէն գիտութեան, մշակական, առևտրական և Ճարտարական պաշտօններու ընդունակ:* Այս արդեստագիտական վարժարաններու կրթութեան հիմունքն են՝ կենդանի լեզուներու ուսումը, բնական գիտութիւններն, աշխարհագրութիւն, երգեցողութիւն, ուրուագրութիւն և մարմնամարզութիւն: Անկլիական լեզուին ուսումը կամաւոր է, բայց ամէն աշակերտները կ'ուսնին: Կան տարեկան աշակերտները շաբաթը 5 ժամ գաղղիարէն դաս ունին. ամառը՝ մարմնամարզութեան տեղ լողալու կ'վարժին. բատիկերէն հիմնովին կ'սորվին, յունարէնը բոլորովին բարձի թողի եղած է. սրատմութեան մասին՝ գլխաւորապէս նոր. պատմութեան կ'պաբապին, մանաւանդ զինուորական, գիտական և Ճարտարական տեսութեամբ:

Գրական անթերի ուսմունքն՝ որով աշակերտներն աղատական պաշ-

*Այս տեղ հեղինակը յատուկ պատկերներով ցոյց կ'տայ դասերուն կարգը, ժամերն եւ ուսմանը ընթացքը զոր զանց կ'ընենք մէջ բերելու: Ծ. Խ.

տօններու կ'պատրաստուին՝ ուսումնարաններու մէջ կ'կատարուին : Աչոք կարող է մանկ ուսումնարան եթէ գրել, կարողաւ հաշուել չգիտէ : Ուսուցիչներն կ'ընեն նորամուտ աշակերտն, և այս քննութիւնը խիստ չէ : Իւրաքանչիւր դասարան՝ երկու հատուած բաժնուած՝ երկու տարուան ուսում կ'պահանջէ : Հինգ դասարան կայ : Հատ աղաք նախ արուեստագիտական գործոց կ'երթան և ապա ուսումնարան կ'մտնեն՝ իրենց յարմար դասարանը՝ յետ քննութեան : Աշակերտները 7 ժամ դասունին օրը, և իրենց առնը պատրաստելու շատ քիչ պարտաւորութիւն : Այս մէթոսն ուսուցչին համար շատ ժամանակ և հոգ կ'պահանջէ, և մեծ արդիւնք կ'բերէ . . . : Աշակերտները շատ քիչ կը դործածեն բառարաններ, դասական հեղինակներու բացատրութիւնն ուսուցիչը կ'տայ այնպէս ճոխ ծանօթութիւններով և մեկնութիւններով՝ որ միշտ գրադէսներուն առջև մեծ արժէք ունին դասական գրեանց գերմանական տիպերը . . . :

Արուեստագիտական դպրոցներն և ուսումնարաններն այնպէս կազմուած են որ զիշերօթիկ աշակերտ չեն ընդունիր. օտարական աշակերտները շատ անգամ կ'ընակին ուսուցիչներուն առնը, որք անոնց վրայ կ'հակին և կ'առաջնորդեն : Վարժարանին կամ ուսումնարանին գլուխը կ'գտնուի միշտ ֆէստը մ'որ ամէն նիւթական զբաղումներէ ազատ՝ իր հիմնաբլութեան ընդհանուր տեսչութեան և բարեկարգութեան պաշտօնը կ'վարէ, և լոկ դասատուութեամբ մը կ'ըբաղի, առանց յատուկ թոշակի : Գասատուներն երեք աստիճան բաժնուած են, իրենց համալսարանական աստիճանին, իրենց արժանեաց կամ իրենց ծառայութեան համեմատ, հետեւեալ կարգով. Ուսուցիչ (professor) oberlehrer կամ ուսումնապետ և collaborator կամ դասատու : 20,000 բնակիչ ունեցող քաղքի մ'ուսումնարանի մէջ ուսուցիչներու համար տարեկան թոշակը կ'հասնի 3,000էն մինչ 3,500 ֆրանք, ուսումնապետի համար՝ 2,400էն մինչ 3,000 ֆրանք, դասատուներու համար 1,400էն մինչ 1,800 ֆրանք. պէտք է նկատել որ Գերմանիոյ մէջ ուսեւտն կրտսիկն նուազ սուղ է քան թէ Ֆրանսոյ՝ հասկընալու համար որ գասատուներն աւելի լաւ կ'վարձատրուին անդ : Քառասուն տարի ծառայելէ ետեւ ամէն դասատու կարող է պաշտօնէ քաշուիլ և Տէրութենէ թոշակ պահանջել որ իր տարեկանին $\frac{1}{5}$ մասը կ'կազմէ. իսկ եթէ գասատու մ'իր աստարիւղին մէջ ցաւադարի, կամ իր կացութիւնը պահելու անկարող դատուի՝ դարձեալ թոշակի մ'իրաւունք ունի՝ որ է իր տարեկանին $\frac{1}{10}$ մասը, որու կ'յաւելուն այնչափ անդամ

Ֆրանսի 63 սանդիմ որչափ որ ծառայութեան տարիներ ունի տասնէն վեր . . . :

Քաղքի մը մէջ որ 7,000 բնակիչ ունի, 440 աշակերտ պարունա-
կող վարժարանի մը պաշտօնեաները սովորաբար կ'բաղկանան տեսուչէ
մը, հինգ ուսուցչէ, ուսումնասլետէ մը, գծադրութեան գասատուէ
մը, մարմնամարզութեան գասատուէ մը: Գասարաններուն համեմատ
կ'փոփոխին աշակերտներու վճարած ամսականը:

Գալորցական կարդապահութիւնն բաւական խիստ է: Որչափ ատեն
որ կըթուծուին տէ՛, վարժապետը հօրը պաշտօն կ'վարէ, և իր
հսկողութիւնն վարժարանէն դուրս կ'տարածուի, միայն հայրենի տան
մէջ անցած իրողութիւններն իր իրաւասութեանէ կախում չունին. աշա-
կերտին միւս բոլոր դործերն՝ եթէ կըթուծեան հետ յարակցութիւն
անգամ չունենան, տեսչական իշխանութեան կ'ենթարկեն, իշխանու-
թիւն մ'որ զանազան պատիժներ կրնայ սնորկնել ինչպէ՛ս՝ բանտ, խա-
րաղան, նոյնպէս իրաւունք ունի աշակերտը վճարել որ և է հասարա-
կաց գալորցէ և ըմբոսանելու դէմ ոստիկանութեան օգնութիւնը
խնդրել: Արդիւեալ է աշակերտներու 47 տարեկանէն առաջ ծխախոտ
քաշել, դիմովալ, նոյն խկ իրենց ծնողաց հետ գարնջի տուները յա-
ճախել, որոնք գումարումներու սովորական վայրերն են. գալորցական
կարդապահութիւնն արդէն աշակերտը ղենուորական կարդապահու-
թեան կ'պատրաստէ:

Աղատական արուեստից համար Համալսարաններն կըթուծեան վեր-
ջին կայտնը կ'կազմեն: Հիմնադիր իշխաններու տուած արտօնութեանց
և գերմանացւոց հանգարտ բնաւորութեան շնորհիւ ոչ ոք Համալսարան-
ներն քաղաքական կեդրոնացումէ դերձ մնալով՝ իրարմէ անկախ դիրք
մը կ'վայելեն իրենց Տնօրէնին և Ծերակոյտին տեսչութեան ներքէ:
Տնօրէնն ու Ծերակոյտն ամէն տարի ուսուցիչներու ձեռօք կ'ընարուին
. . . : Ուսուցիչներն յատուկ իրաւասութիւն մը, օրէն մը, բանտ մը
ունին և սովորական դատարաններէ անկախ են:

Պաշտօնաւոր ուսուցիչներն, որոց թիւը միջին հաշուով իննսուն է
մէն մի Համալսարանի համար՝ ազատ ուսուցիչներէ կ'բանան, privat-
docenten, քանի մը տարի հասարակային դասախօսութիւն ընելէ ե-
տեւ, որովհետեւ կ'ստանան յետոյ պաշտօնաւոր ուսուցիչները զանոնք
կ'ներկայացընեն. կըթուծեան պաշտօնեայն կ'անուանէ, և երբեք
պաշտօնէ չեն կրնար ձգուիլ, մասն զի վարդապետութիւններն ու
կարծիքները բոլորովին ազատ են, և մի միայն ընդհանուր օրինաց

Հակողութեան Էնթակոյ : Այս առթիւ , Պ. Սիպէլ՝ Պօնի Համալսարանի Տնօրէնն՝ իրաւամբ կ'այսմէր 1868ին որ՝ Պէթէ Գրանտայի և Անկլիայի մէջ՝ սովորական բան մ'է տեսնել որ անուանի զիսնական մը ուսուցչութեան մէջ թող մը չունի , Գերմանիայի մէջ այս բանս խիստ հազուայիւս բացառութիւն մ'է : Պետութիւնն ու աշակերտներն առատապէս կ'վարձատրեն ուսուցիչներն , և տրժանիքն է որ համարու և հարստութիւնը կ'ապահովէ :

Համալսարանները չորս խումբ կ'բաժնուին . աստուածաբանութիւն , իրաւագիտութիւն , բժշկութիւն և փիլիսոփայութիւն , որ կը պարունակէ նաև պատմութիւն , զբաղանքութիւն և դիւտութիւններ : Անյայտի խիստ համալսարանի ուսմանքը կ'աւանդուին ինն աստուածաբան վարդապետի , տանինն իրաւագիտի , քսանինն բժշկի , քառասունհինգ զբաղանքի և դիւտանի ձեռք , ընդ ամենն հարկւր ուսուցիչ պաշտօնէ ալ կ'կազմեն : Փիլիսոփայութեան անուամբ կ'ուսցնեն՝ բուն խնայատարութիւն , բնական իրաւագիտութիւն , ճաշակագիտութիւն , մանկավարժութիւն , հին և նոր լեզուաց բանասիրութիւն , պատմութիւն , հնագիտութիւն , անտեսագիտութիւն , ամբողջ մաթեմատիկ , բնագիտութիւն , տարրագիտութիւն , բուսաբանութիւն և կենդանաբանութիւն :

Գերմանական 26 համալսարաններու համար Պետութեան կողմէ տրուած գումարը՝ 1867ի հաշուեցոյցին մէջ՝ 13 միլիօն ֆրանք էր , զրեթէ 2,500 ուսուցիչ պաշտօնէից համար , իւրաքանչիւրին տարեկան թողարկը , միջին հաշուով 20,000 ֆրանքի կ'հասնէ՝ աշակերտաց վճարումներն ևս ի համար առնելով :

Մէն մի Համալսարան՝ իշխաններու կամ հարուստ անհատներու կողմէ նպաստներ կ'ընդունի , որով կարօտ և աշխատասէր պատանիներ կարող կ'լինին մեծածախ ուսմանքը հանդարտ աւարտել : Գերմանական ընկերութեան մէջ՝ ուսանողն բնատիւյ զրոյժ մ'ունի՝ որ համալսարանական քաղաքներու գեղանկար երեւոյթ մը կ'ընծայէ : Շարժումներն ազատ են , ճակտին վրայ կ'դնէ փոքրիկ բազմազոյն զխառնոց մը որ հազիւ թէ իր երկայն գիտական մէկ քառորդը կ'ծածկէ . նկարակերտ բաժնոնակ մ'ու մեծ կօշիկներ կ'հագնի . անչափ ծխափայտով մը , ահազին գաւազանով մը կ'քալէ միշտ և իրեն ուղեկից ունի խոշոր շուն մը որու յատկութիւնն է անցորդներուն ահազելն : Գաւառանէն դուրս՝ ուսանողն ունի ծխելու համար փայտեր և նստարան մ'իր սենեկին մէջ ննջելու համար . ասոնք անհրաժեշտ , և տոէսլ միակ կարասիներն են . քիսի երդելու և խմելու համար ունի զարեջրի տունն . հըր կ'զուսմարտի

ընկերութիւնը . վարմանքի մէջ անկախութիւնն , իշխանութեան զէմ քամահանք , քաղքի մարդուն զէմ վեհ և բազմահար արհամարհանք , ահա առոնք են զերմանացի ուսանողին արեական հանգամանքը . զինավարժութիւն , սլաքքար , մենամարտ , խմելու համար ահումքներ , ասոնք են իր սիրական մարդանքը :

Քիչ անդամ կ'սլաւաստէի , զրեթէ անկարելի է որ ուսանողն անգամ չդրուի բազմաթիւ ընկերութեանց մէկուն զոր համալսարանը դալուն կ'զանէ . . . : Փեղըրին և կուրծքի ժապաւէնին վրայ նշանակուած անունը , թուանշանն ու գոյներն իրաբմէ կ'զանազանեն այս ընկերութիւնները : Իւրաքանչիւրն իր օրէնն ունի Comment անուանեալ , իր կազմակերպութիւնն , իր նախագահն , և իր կանոնաւոր նիստերն որոշեալ ըմպարանի մը մէջ : Հիմնարկութեան կամ ուրիշ շնանաւոր զէտքի մը ստորգարծի հանդէսներէն զատ՝ նոր ուսանողի մ'անդամակցուցութիւնն մեծ խրախմանութեան պատճառ մ'է , ըստ որում նորեկը չլինար ընդունուիլ առանց ընծայութեան արարողութեանց որու էական սարքը դարեջուրն է , վիպ 12 տունով երդն զոր պէտք է երգել մէն մի հաղներդի աւարտը թաղոյի մը պարտելով : Մի անգամ ընդունուելէն ետեւ ուսանողն ընկերութեան մասն է , որ զանի կ'սլահանէ և կ'սլաշապանէ ուրիշի զէմ : Երբ ընկերութիւն մը զլինուց մէջ քաջաւարժ անդամներ ունենայ՝ իր պատիւը կ'սլահանջէ որ ուրիշ ընկերութիւն մը ի մենամարտ հրաւիրէ . այս դուստրներն երբեմն արհեստահեղ կ'լինին , որչափ անոնք որ սաէսլ իրաւացի պատճառներով կ'մղուին : Ուստի նողմ'իր երեք կամ հինգ տարուան համալսարանական ընթացքին մէջ անտրեւ շատ մը մենամարտներ կ'ունենայ : Այլ տակայն երգերն ամենէն աւելի դարեջուրը , ծխախտար , գինին և զէնքը կ'հաշակեն . դարեջրի և ծխախտարի մշուշներու մէջ անգամ՝ ուսանողները կ'սլահեն միշտ կնկան նկամամբ ակնածական զղացում , և իրենց բազմաթիւ հայրենասիրական երգերու մէջ՝ բաւական զրդիւ կ'զանեն հոյի և երեւակայութիւն բորբոքելու : Իրենց երգարանն (commerzbuch) հաւաքածոյ մ'է որ սերունդէ սերունդ կ'աւանդուի ուսանողներու : »

Հեղինակը կ'յիշատակէ լատիներէն երգ մ'իբրեւ հանրածանօթ , և ապա աղղային մը զոր իբրեւ հեռաբորբական սկիտի քաղեւք . 1782ին շինուած է , ծանր և հանգիստաւոր եղանակի մը վրայ կ'երգուի . անունն է Landes vater, հայր հայրենեաց : « Ընկերութեանց մէջ նախագահն առաջին ուսանաւորը կ'երգէ , ապա բաժակ մը դարեջուր կը խմէ . այն ատեն ձեռքէ ձեռք երկու սուր կ'անցնին , որոց ամէն ու-

սանող իր փեղդըը կ'վարսէ և վերջին բառնաւորն աւարտելէ ետեւ՝
դպն կ'աւնու . չկայ աւելի պատուաւոր նշան մ'ուսանողին համար
քան այս ծակն իր փեղդըըն վրայ :

Էռուծի՛մն, ամնուրեր . Թո՛ղ ամէն որ ունին զնէ վեհ ճայներուն : Մտիկ
ըրէք, երգերու երգը կ'երգեմ, միտ դրէք, արխասիրտ գերմանացի եղբայր-
ներ . Թո՛ղ խնդազին համերգն որոտա՛յ :

Գերմանիոյ գաւաւունք, բարձր հնչեցէք հայրենասիրական նուագը . իր
երկիրներուն բարերարն, մեծ մեծ գործերու զիւցազնը միաբերան հուշա-
կենք :

Պատրաստ ենք մեր ինչքն ու կեանքն անոր տալու, եւ եմէ հայրենիքը
պահանջէ՝ մահաբեր վիրաց անմտագիր՝ պիտի ժպտինք այն ժամուն երբ
պէտք պիտի լինի մեռնի՛լ :

Թո՛ղ վերստին որոտայ երգերու երգը : Քսեշ լինինք, գերմանացի լի-
նինք . միացէք մի՛ եւ նոյն սիրոյ մէջ, դուք՝ գերմանական ծառին ֆիւղերը,
դո՛ւք որ եղբայրական սիրով կապուած էք :

Այս մանր տեղեկութիւնները կարեւոր էին նշանակել որպէս զի գեր-
մանական համալսարաններու բնասիւս կերպորանն յայտնուի, համալ-
սարաններ ուր ուսանողն իր կեանքը կ'անցընէ մէկ կողմէ իրաւագիտու-
թեան, բժշկական գիտութեան եւ իմաստասիրութեան ծանր ծանր
աւսմանց հետեւելով, միւս կողմէ մարմնական մարզանաց՝ որոց մէջ կը
վճանի և միանդամայն կ'կազմուի երիտասարդութեան աշխոյժը : Ինչ-
պէս որ կ'երեւի, Գերմանիոյ մէջ կըթուլթուին մի միայն մտաւորական
կարողութիւնները զարգացընելու մէջ չկայանար այլեւ արդէն ծանօթ
աւաճն ի գործ կ'դնէ . *այս ոգը միտքն ապա ոգը մարմնոյ մէջ* :

Այս բարձր ուսմանց վարժարաններու մօտ՝ պատանիներն որ ճար-
տարութեան, վաճառականութեան կոչում ունին, յատուկ դպրոցներ
կ'դնան ուր իրենց պէտք եղած մասնաւոր գիտելիքը կ'ուսնին . . . :

Կանանց դատարարակութեան համար ևս մեծ շարժում մը կայ, որ
գործնական օգուտներ պիտի յառաջ բերէ : Տիկնայք Լուիզ Օդօ և Օ-
կիւստ Շմիտթ այս նպատակաւ ՚ի Լէյպցիխ կիսամանկութեթ մը կը
հրատարակեն, և օրիորդ Մինա Բինսօֆ իդական սեռին համար կըթու-
թեան և հասարակաց պաշտօններու հաւասար բաժանումը կ'պահան-
ջէ :

Կըթուլթուին խնդիրն գերմանական միտքերն ամենէն աւելի զբաղը-

* Mens sana in corpore sano,

ԺՈՒՎԵՆԱԼ, ԵՐԷՅԻ Ժ :

ցրնուլ խնդիրներէն մին է . չկայ երկիր մ'որ վարժարանն այնքան հաճ
գասիրութեան առարկայ լինի որչափ 'ի Գերմանիա : «Ամենէն բարձ-
րադիր անձինք և ամենէն մեծ տիկիներն իրենց ժամանակը , իրենց
հարստութիւնն և իրենց փորձառութիւնը կրթութեան խնդրոյն կը
նուիրեն . առաջին կարգի դասակներն զիբքեր կ'յօրինեն մանկաւոյն
համար , քերթողներն մարմնամարզութեան և երաժշտութեան դասե-
րու համար ոտանաւորներ կ'շինեն , և ամենէն երեսի յօրինիչները
չեն արհամարհեր անոնց համար եղանակներ յարդարելու » . . . *

Գերմանիոյ մէջ ուսուցչութիւնն աղատ է՝ համալսարանական ուսուց-
չութենէ զատ : Ամէն մարդ կամ կին՝ յետ քննութեան՝ իր պաշտօնին
վկայագիրն ստանալէն ետե՝ կարող է իրեն փափաքած տեղը դպրոց մը
հաստատել : Նախակրթական ուսուցչութիւնն , զոր Պետութիւնն պար-
տաւորեցաւ հիմնել կրթութեան պարտաւորական օրինաց գործադրու-
թիւնն ասպահովելու համար՝ էապէս հասարակրդային է . դպրոցն
խորհրդունէն անոնց տեսչութիւնը կ'վարեն . այս խորհրդոյ անդամ-
ներն են դիւղի մէջ՝ հողեւոր հովիւը , շահասն , և ընտանեաց չորս հայ-
րեր . իսկ քաղաքներու մէջ , այս մասին երեք ձեռնհաս քաղաքացի-
ներ , վեց քաղաքացիական ժողովոյ անդամներ և մէկ աղատ դպրոցի
տեսուչ : Արդեստադիտական դպրոցներն և ուսումնարաններն նահան-
գին նախադասին իրաւասութեան ներքեւ են , որու անդամակից կը
գտնուին Պետութեան կողմէ՝ կարգեալ մարզիկ , և այսպէս միասին կը
կազմեն Նահանգին դպրոցական խորհուրդը , որու ներկայացուցիչն է վե-
րատեսուչ մ'ամէն շրջանի մէջ :

Այս դրութեան շնորհիւ՝ կրթութեան հարկաւորութիւնն բոլորո-
վին երկրին բարույ և վարույ մէջ մտած է , և ընտանեաց հօր մ'աղա-
սութիւնն բնաւ իր իբրանց զրկում մը չսեռներ օրինական պարտաւո-
րութեան մէջ : † Օր մը տղեկի մը հանդիպեցանք , որ մեզնէ ողորմութիւն

* Պատուէն :

† Պէտք է գիտնալ որ դեռ եւս կ'գտնուին պարտաւորական կրթութեան հա-
կաւորողներ , որ զանազան պատճառներ՝ թէ ընական թէ ընկերական ի-
րաւանց վրայ հիմնեալ , մէջ կ'բերեն Պետութեան այս մասին միջամտու-
թիւնը ժխտելու համար : Շշանաւոր է այս նիւթին վրայ Պ. Ժ. Մօլինարի
եւ Ք. Բասիի մէջ անցած հրապարակային վիճարանութիւնն 1858ին :
Մօլինարի՝ պարտաւորական կրթութեան պաշտպան , յաղթանակը կ'տանի :
Enseignement obligatoire, discussion entre De MOLINARI et F.
PASSY.

Ծ. Խ

խնդրեց . երբ հարց ու փորձ բրինք թէ լինչ պիտոյքէ ստիպեալ այս
ծայրայեղ միջոցին կ'դիմէ , մեր ողորմասիրութիւնը դրդուելու համար
ուրիշ ասորհովազոյն բան մը չդտաւ ըսելու բայց եթէ պէտք ունէր
ստակի Պորպէս զի գալոցի համար տետրակ մը դնէ : Այս ողորմասի-
րութիւնն զոր կարելի է մտաւորական անուանել , Գերմանիոյ մէջ
ընդհանուր բան մը դարձած է : Ուսումնարանին հետաւորութիւնը՝
զիւղի բնակչին համար՝ երկրորդական կրթութեան ծախքը շատ ծանր
կ'զործէ , բայց չքաւոր աշակերտը՝ որ աշխատութեան մէջ եռանդ և
յարատելութիւն կ'ցուցնէ , իր ուսումն առած քաղքին մէջ քան զինքն
բաղդաւոր և ունեւոր դասերէն մը կ'դանէ անվրէպ , այնպէս որ այս
դասերէն զոնի իր տունը կ'հրաւիրէ , պէտք եղած զրքերն անոր կը
մատակարարէ , և կանոնաւոր կերպով երեկոյն իրեն սեղանակից կ'ը-
նէ . այս անկեղծ հիւրասիրութիւնն սրտաշարժ ապացոյց մը չէ՝ կրթու-
թեան համարաշխուժեան և արժանապատուութեան :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատշաճապէս պատմութիւն գրելը — այսինքն՝ նամակներ համա-
ռօտել , և ճառերէ հատուածներ քաղել , դուրսանական և պարսաւա-
կան մակդիրներ ըստ պատշաճի յերկրել , մեծ մարդոց իրարու ներ-
հակ բնաւորութիւնները նկարագրել , մէջ բերելով անոնց առաքինա-
կան և մեղի հանդամանքը շատ մը հանդէքներ և առանցներ զործածե-
լով , այս ամէնը շատ զիւրկն գործ է : Բայց ճշմարտապէս մեծ պատ-
մադիր մը լինելու համար՝ թերևս իմացական ամենէն հազուադիւ-
րաբարութիւնը պէտք է : Շատ զիտական գործեր ամենակատարեալ են՝
իրենց սեռակին մէջ : Կան քերթուածներ զոր տրամադիր եմ անթերի
անուանել , կամ ըսել թէ այնպիսի արտասեր կ'պարունակեն որ ընդհա-
նուր դեղեցիկութեան մէջ անտես կ'անցնին . կան ճառեր , և ի մասնա-
ւորի Գերմանիայի մի քանի ճառերն՝ որոց մի բառն անգամ այլըն-
քելով կ'եղծես ոճը . բայց մեղի անծանօթ է պատմութիւն մ'որ մեծ

դադարիսրած պատմութեան կարենայ մօտենալ, նոյնպէս պատմութիւն մ'որ ուղիղ զծէն հեռանալով՝ աջ կամ ահեակ լիովին չընդի :

Պատճառը դիւրին է նշանակել : Գրականութեան այս դաշտը մի վիճելի հոլի վրայ է : Երկու տարբեր երկրի սահմանին վրայ կը դնուի . երկու ներհակ իշխանութեան իրաւասութեան ներքե է , և՛ նոյնազիր երկիրներու պէս՝ վատ սահմանուած , վատ մշակուած և վատ դժուած է : Երկու տիրապետներու մէջ հաւասարադէս բաժնուած լինելու տեղ , այս է Բանին և Երեւակայութեան մէջ , փոփոխակի միոյն կամ միւսին բացարձակ իշխանութեան ենթակայ կ'դնուի : Պատմութիւնը մերթ բանահիւսութիւն է , մերթ տեսութիւն :*

Ըսուած է՝ թէ պատմութիւնը փիլիսոփայութիւն է որ օրինակներով կ'ուսցնէ . դժբաղդաբար ինչ որ փիլիսոփայութիւնն լուրջ և խորին իմաստներու կողմէ կ'շահի , օրինակներն ընդհանրապէս կ'կորուսեն կենդանութեան կողմէ : Մի կատարուն պատմիչ պարտաւոր է ունենալ բաւական զօրաւոր երեւակայութիւն մ'որ իր պատմածն աղղու և զեղանկար գործէ : Սակայն այնպէս քաջ հետադռնել պէտք է զայն որ իր դրած նիւթերով շատանայ և ինքնահնար յաւելումներով թերատ մասերը ընլու զգոյշ մնայ : Նա պարտի լինել խորիմաստ և ճարտարամիտ բանագատ մը : Բայց դարձեալ բաւական ինքնիշխանութեան տէր լինիլ պէտք է որ իրողութիւններն իր ենթադրութիւններու բովին մէջ չնեակ : Անոնք որ այս գրեթէ անդարտելի դժուարութիւններու խնլամուտ են՝ տարօրինակ չլիտի դոնեն որ ամէն մատենագիր չէ յաջողած պատմութեան վիսրաբանական կամ հայեցողական ճիւղին մէջ :

Թէև շատ տարբերութիւններու և բացառութիւններու ենթակայ՝ այս ընդհանուր կանոնը կրնանք դնել թէ պատմութիւնը Վիպասանութեամբ կ'սկսի և Փորձով կ'աւարտի : Վիպասանական պատմագիրներուն մէջ ամենէն հինն ու լաւագոյնը Հերոդոտոս է : Վիպասաններու (narrator) դուրսը կ'անցնի իր աշխոյժ երեւակայութեան , պարզ

*Պէտք է գիտնալ որ այս յօդուածին հեղինակը լօրտ Պ. Մարթլէյ 1828-ին գրած է զայն : Պրնթէ յիսուն տարիէ 'ի վեր՝ պատմագրութիւնն՝ իբրեւ զիտութիւն՝ խիստ մեծ քայլեր առած է նոյն իսկ Մարթլէյի հայրենիքը՝ յԱնկլիա , եւ 'ի մասնաւորի Պերմանիա : Ուստի լօրտ Մարթլէյի այս գրուածը նշանաւոր , եւ խորին ուշադրութեան արժանի է՝ ոչ այնչափ իբրեւ արդի պատմագրութեան բանադատութիւն , այլ հին պատմաբաններու մասին պարունակած լուրջ , խորիմաստ քննադատութեանց և պատմական գիտութեան վրայ արտայայտած ճշգրիտ հրահանգաց համար : Ծ. Խ.

գորովալիւր սրտին, իր նկարագրական և տրամախօսական հիանալի քանքարին և յստակ ու դիւրահաս լեզուին համար: Մեզ կ'ընթերցեն նա զմայլելի մասուկ մը: Իր անճարակութեան մէջ բոլորովին անկեղծ շնորհ մ'ունի, իր անմեղութեան մէջ նենգամտութիւն մը, իր անհեթեթութեան մէջ միտք մը, իր թուաւորութեան մէջ համոզակեր ճարտասանութիւն մը: Ձկայ մասենապիւր մ'որ իրեն չափ հետաքրքրութիւն շարժէ ինքն իրեն ու իր զիրքին համար ընթերցողին սրտին մէջ: Թէ՛ 23 դար մեզնէ հեռի է նա, սակայն իրեն համար նոյն արդահատական գուժը կ'ըզարթնէ որ Գօնդէն և Այդ ներշնչած են կ'ըսեն ընկերութեան մէջ: Անհամեմատ զիրք մը՝ դրած է: Թերևս քան ամէն լաւ պատմութիւն լաւագոյն քան մը դրած է, բայց լաւ պատմութիւն մը չէ՝ դրած: առաջին զլիւն մինչև յետին՝ Հերոդոտոս պարզապէս հնարիչ մ'է: Ձենք ակնարկեր միայն խոշոր շինովի զրոյցներն որոց համար այս վերջին առեւններս զինք գործընթին այլ և այլ քննադատներ, այլ կ'խօսինք այն ներկին վրայ որ հաւասարապէս կ'ընկալուի իր բոլոր վիպադրութիւնն, այնպէս որ ամենէն նրբամիտ ընթերցողն և իր քննադատութեան մէջ կ'մնայ թէ՛ որ մասն ընդունի և իրը մերժէ: Իր գործին ամենէն ստուգաբան մասունքն այն յարաբերութիւնն ունին իր ամենէն անհեղեղ առաջաւորներու հետ ինչ որ ունի Հէնրի Ե. Պօլսոնը: Նո՛ր հետ (թատրոնը իրենք Շէքսպիրի): Արշաւան մ'ըբաւ Գոնքսես Գունաստանի գէմ, արշաւան մ'ևս Ֆրանսայի գէմ եղաւ: Պատմապի ճակատամարտ մը մղուեցաւ, և Աթինոսի ճակատամարտը պատահեցաւ: Բէմայրի՛՛ և Էքսէզըր, Գօնդէսը և Տօֆէն այնքան ճշմարիտ անձեր էին որչափ են Տէմարադոս և Պօսանիաս: Սալիկեան օրինաց վրայ Արքեպիսկոպոսին խօսած ճառն և Թուոց զիրքն այնքան իրարմէ չեն տարբերիր այն ճառերէն որ եկեղեցական բեմին կողմէն ըսուած են ամէն ժամանակ, որչափ կ'տարբերին Մարտոնիոսի և Արտապանի ճառերն Ըօշի խորհրդարանն արտասանուած ճառերէն: Շէքսպիր մեզի բանականութիւն կ'ստայ և սղաննուած ու վիրաւորուած զօրականներու շուքակը, որոնք՝ ըստ մեզ՝ նուազ ստուգաբանութեան քան թէ Հերոդոտոսին զրաճները: Հերոդոտոսի մէջ այնպիսի հատուածներ կան որ Շէքսպիրի արարուածներուն չափ երկայն են, որոց մէջ ամէն ինչ թատրոնը օրէն ըսուած է և վիպադրութիւնն տեսարանական գործողութեանց միայն կ'ծառայէ: Անտարակոյս՝ կարելի է որ պատմապիւր քանի մը ճշմարիտ խօսակցութիւններու նիւթ ի վրայ իմացած լինի, բայց զէպքեր, որ եթէ պատահած են երբեք:

այնպէս հեռաւոր դարերու և անցերու մէջ պատահած են որոյ մանր պարագաներն անշուշտ իրեն անյայտ պիտի մնային, խիստ մանրակրկիտ վիսպագրուած են: Գիտենք, ամէն ինչ որ Կանդոլ Կիկէսի ըստ, և ամէն ինչ որ Աշտահակայ ու Արբախի մէջ պատահեցաւ: Հետեւապէս անկարող ենք դատելու թէ արդեօք՝ զանազան դործառնու թեանց մասին մեզի տուած նկարագիրներուն, որոց թերևս ինք վերահասու եղած լինէր, պէտք է հաւատ ընծայել՝ բայց եթէ միայն լոկ ծրագրին. թէ արդեօք՝ օրինակի համար, Կէլօնի պատասխանն յունական դաշնակցութեան դեսպաններուն, ևամ Արիստիտէսին և Թէմիսդոկլի մէջ ընտանի տեսակցութեան առթիւ եղած խօսքերն ճշդիւ մեզի ամանդուած են: Տարակոյս չկայ որ մեծ դէպքերն հաւատարմօրէն պատմուած են, նոյնն հաւանական է նաև ուելի անհշտն պարագաներու համար, բայց անկարելի է ստուգել թէ նրն է ուղիղը: Մտածին զրոյցներն այնչափ իրողութիւններու կ'նմանին և իրողութիւններն այնչափ մտածին զրոյցներու, որ՝ շատ հետաքրքրաշարժ կէտերու մասին՝ մենք ոչ հաւատ կ'ընծայենք և ոչ կ'մերժենք, այլ տարտամ և անկերջաշալի երկբայութեան միջ կ'մնանք: Գիտենք որ ճշմարտութիւն կայ, բայց չենք կարող ճշտապէս որոշել թէ այդ ճշմարտութիւնն ո՞ր կը գտնուի:

Հերոդոտոսի վրիպակներն սլարդ և բազմահնար մտքի մը վրիպակներն են: Տղեկներն ու ծառաներն զլխասրապէս Հերոդոտոսան են իրենց վիսպաբանական ոճին մէջ: Ամէն ինչ թատերական ձևով կ'ըսեն: Առած դարձած են անոնց կ'ըսէ և ըսանքն: Ամէն մարդ որ անոնց վէճերը խաղաղելու պաշտօն ունեցած է, զիտէ որ՝ խաբելու միտք չունեցած ատեննին իսկ՝ կարեւոր է որ անոնց խօսակցական տեղեկութիւններն ուշի ուշով քննելէն ետեւ վճիռ արուի: Եթէ ուսեալ մարդ մը վարչութեան վերջին փոփոխութիւնը պատմէր՝ պիտի ըսէր. «Լօրտ Կօարիչ հրաժարական տուաւ, և հետեւապէս թաղաւորն Ուելլինկդընի դուքսը կոչեց»: Իսկ դռնասպան մ'այս լուրն այնպէս կ'պատմէ որպէս թէ Ուլինտդօրի արքայական մահճին վարադրոյններուն ետեւը գտնուէր. ուստի լօրտ Կօարիչ կ'ըսէ. «Այս գործերը չեմ կարող գլուխ հանել. պէտք է որ պաշտօնս թողում: Եւ թաղաւորն ըսաւ՝ կ'ըսէ նա «շատ աղէկ, պէտք է որ Ուելլինկդընի դուքսը կոչեմ, և ամէն բան կ'կարգադրուի»: Պատմութեան հօր բուն ոճն այս է:

Հերոդոտոս զրեց ինչպէս որ բնական էր որ գրէր: Գիւրազգաց,

հետաքրքիր , վառվառն , նորութեան և յուզման անյաղս տենչացող ժողովրդեան մը համար դրեց , ժողովրդեան մը համար որուն մէջ զիգրաբուեցանքն իրենց գերազոյն կատարելութեան հասեր էին , մինչդեռ փիլիսոփայութիւնը մանկութեան մէջ էր : Իր քաղաքակիցները նորակներ էին մշակել արձակ շարադրութիւնք : Ազգային զործերն առհասարակ քերթողական ոճով յիշատակուած էին : Ուստի առաջին պատմաբանները կարող էին՝ առանց քննադատութեան երկիւղի՝ իրենց նախորդներուն , այս է բանահիւսններու ազատութեամբ արձանագրել : Քիչ էին դրեանք . հին ժամանակներու դէպքերն առանցութեամբ և ժողովրդային երգերով կ'իմանային , օտար երկիրներու սովորութիւններն ուղեորներուն բերած անդեկութիւններէն : Քաջայայտ է որ թէ հեռաւոր տեղի , թէ ժամանակի մէջ պատահած իրերու վրայ ձգուած խորհրդաւոր քօղը ստեղծ կ'արդիւնէ մեղ իբրեւ անբնական գործվել ինչ որ անկարելի կ'դատենք : Իբրեւ հրաշալիք՝ ակնադիշ կ'նայինք վիշապի մ'որ երեք զրահաւոր դադղիացի սպաննած է , այլ սակայն՝ առանց ամենաթեթեւ զղուանաց կ'կարգանք թէ ինչպէս Կօստֆրուա իր հաղաբաւոր , և Ռինալաօ իր բիւրաւոր մարդիկը սպաննեց : Աւերջին հարիւր տարուան շրջանին մէջ՝ Չինի և Պանդամի վրայ անբաւ զրոյցները՝ որ սլաւա կնկան մ'անդամ անհաւատալի պիտի թուէին՝ իբրեւ քաղաքական տեսութիւններու հիմունք ծանրօրէն կ'աւանդէին մեղեքեւելի փիլիսոփաներ : Ինչ որ Խաչակիրներու ժամանակն է մեղի համար՝ Կրէստի և Սօլմի վարն էր Հերոգոտտի ժամանակակից յունաց համար : Ինչ որ էր Բաբելոն ասոնց՝ նոյնն էր Բէրլին վերջին դարուս դադղիացի ճեմականներու համար :

Հերոգոտտի զիբքն սլաւիսի ժողովրդեան մը համար դրուեցաւ . և՛ եթէ ստոյգ է զրոյց մը՝ թէ և անուանի հեղինակներէ հաստատուած չէ , բայց ինքնին հաւանական կ'երևի , ընթերցանութեան համար չէ շարադրուած այն այլ լուեւու համար : Փառասէր հեղինակը քանի մը ձեռագիր օրնականներ ցրուելով չէր որ իր վարձքը կ'յուսար . քանի որ հարուստները միայն սիտի կարենային ձեռք ձգել այդ ձեռագիրները : Ոլիմպիական մեծ հանդէսն՝ որ յունական անուան նախանձախնդիր անթիւ ժողովրդներ կ'դումարէր Տուլրական վայրագ լեռներէն և Խառալիդ ու Ալբիդ հեռաւորագոյն կողմերէն , իր յաղթանակին թափքը կ'զգանար : Պատմութեան կենդանութիւնն և ոճին զեղեցկութիւնը մեծապէս կ'օգտէին արտասանութեան ազգու ներդրութեամբ , անաբանին շքեղութեամբ և համակրութեան հզօր ազդեցութեամբ :

Եթէ այնպիսի տեսարանի մը մէջ քննադատ մ'են ընէր և վկայութիւններ հարցունէր՝ իբրեւ սլաղ և թերահաւատ բնութեան տէր անձ մը սխալի նկատուէր, և այդպիսի քննադատներ սակաւաթիւ էին անդանօր։ Պատմաբանին պէս էին և ունինդիրները — հետաքրքիր, զիրահաւան, կրօնական երկրպագու կամ հայրենասիրական խանդով զիւրապառ։ Բուն իսկ զմայլելով մտիկ ընող յարմար մարդիկ էին ասոնք թէ ինչեք կ'ստամուլին այլաճող կենդանիներու, թռչուններու և ծառերու վրայ։ Թզուկներու, հսկաներու և մարդակերներու վրայ, աստուածներու վրայ, որոց անունն իսկ արտասանելն ամբարշտութիւն էր, հին տէրութիւններու վրայ, որ իրենց ետեւէն նախկին ժամանակներու զործերը գերազանցող յիշատակարաններ ձգեցին։ զաւառներու նմանալքաղքներու վրայ, ծովանման գետերու վրայ, հիանալի սլաքիսպներու, տաճարներու և բուրգերու վրայ, ծէսերու վրայ զոր Մոդերն այդուն կ'կատարէին լեւներու կատարները, Մեմփիսի յաւիտենական կոթողներուն վերադրեալ գաղտնեացի վրայ։ Մի և նոյն զմայլում մով իրենց բնիկ երկրին շնորհալի վէպերը կ'ըէին։ Ահա կ'իմանան միջին դուշակութիւններու կատարումը, այն յանդանաց սպտիժն որոյ վրայ կարծես թէ երկնային արդարութիւնը քօզ մը կ'ձգէր, երազներ, նշաններ և մեռելին կողմէն աղլարարութիւններ, իշխանութիւններ՝ որոց համար աղնի ոսոխներ իրենց զօրութիւնն ու ճարտարութիւնն 'ի դործ դնելով կ'մըցէին, մանկիկներ՝ որ մարդասպանին դաշունէն՝ տարօրինակ կերպով կ'աղատէին՝ որպէս զի վեհ ճակատադրի մը վրձակիւն։

Բանի պատմութիւնն իրենց ժամանակներու մօտենայ այնքան աւելի հետաքրքրութեամբ կ'համակուին յոյնք։ Այժմ տարեդիրն ունի պատմելայն մեծ սլաքաւոր յորմէհեաէ Եւրոպա իր մտաւորական և քաղաքական գերագահութեան թուականը կ'սկսի — պատմութիւն մ'որ՝ թէ և մեզնէ այնչափ հեռաւոր ժամանակի մէջ սպտահած է, մարդկային աղլի տարեդրութեանց մէջ ամենէն սքանչելին և սրտաշարժն է — պատմութիւն մ'որ կ'սպարունակէ լիուրի ինչոր վայրենի է և հրաշալի, ինչ որ աղբեցիկ է և կենսատու։ մէկ կողմէ անբաւ հարստութեան և բռնակալութեան ամէն հսկայական քմահաճութիւնները, միւս կողմէ իմաստութեան, առաքինութեան և արիութեան զօրաւոր քաղցին սքանչելիքը։ Հերոդոտոս կ'ստամէ անոնց թէ ինչպէս մէկ օրուան մէջ գետեր կ'յլամբին, ինչպէս զաւառներ սովալլուկ կ'տառաւայն, ինչպէս լեւներ ծակելով նաւեր կ'անցընեն, ինչպէս ալեաց վրայ

Ճամբայ մը ձգելով բանականեր կ'երթնէին , ինչպէս սիրապետութիւններ և հասարակապետութիւններ 'ի սպառ կ'իրոծանին , և ինչ անձնութիւն , ինչ սարսափ , ինչ շփոթութիւն և յոսահատութիւն կ'տիրապետեն ամենուրեք — և ապա կ'նկարագրէ թէ ինչպէս այս ծայրայեղ ազէտից մէջ վնաս և արի սիրտեր փորձ կ'փորձեն մաքառիլ և յուսահատական ճիգ մը թափել անհամեմատ հզօր թշնամեաց դէմ , թէ ինչպէս շատ մարդիկ իրենց կեանքը սուղ կ'ծախեն՝ երբ գիմալը տութիւնն այնուհետեւ անկարելի կ'լծուէր , թէ ինչպէս յոյնք նշանաւոր յաղթութիւն մը կ'աւանդէ և անխնայ վրէժխնդրութիւն կ'սահմանէ : Այսպէս կիրք բորբոքելու և ազդային հպարտութիւնը զրուելու համար քաջագէտ հիւսուած այս պատմութեան իրականութեան զօրաւոր գոյնը տուող պարագաներն 'ի հարկէ հաճութեամբ պիտի ընդունուէին :

Ինչպէս որ կ'ըստի՝ Հերոդոտոս իր պատմութիւնը դրած ժամանակէն մինչև Պլուտարխոսեան պատերազմին տարան շուրջ քառասուն տարի անցեր էր — ղինուորական և քաղաքական դէպքերով բեղմնաւոր քառասուն տարի : Այս շրջանին պարագաները յունական բնաւորութեան վրայ մեծ ներդրածութիւն ունեցան , և այս ներդրածութիւնն ամենէն աւելի նշանաւոր եղաւ Աթէնքի մեծահռչակ հանրապարտութեան մէջ : Արդարեւ՝ աթենացի մը , նոյն իսկ Հերոդոտոսի ժամանակը , հաղիւ ուրեմն պիտի գրէր Հերոդոտոսի զբքին նման վիպական և շաղկապատ գործ մը : Քաղաքակրթութիւնն յառաջադիմելով՝ այս անուանի հասարակապետութեան քաղաքացիներն նուազ երազապատմ և պարզմտ դարձան : Ատենացիներ իրենց նախնիք կ'սկսած էր ինչպէս շատանային , կ'սկսած էր սկսան ինչ որ իրենց նախնիք պարտ կ'համարէին հաւատալու : Արիստոփանէս իր քաղաքակրթներուն բնաւորութեան այս փոփոխութիւնը խնդագին կ'ակնարկէ : Ապլուտոն մէջ՝ հայր և որդի , անտարակոյս իրենց վերաբերող սերունդներուն ներկայացող ցիշներն էին : Այս բարոյական յեղափոխութեան նշաններն աւելի զլալի կերպով կ'երևին մանաւանդ ողբերգութեան կրած փոփոխութեան մէջ : Եւքրիլոսի վայրագ վտիմութիւնն ամէն նորահաս Փիդիպոլիդէսի ծաղրութեամբ դարձաւ : Բանաստեղծութեան յաջորդեցին փիլիսոփայական վերադարձ խնդիրներու վրայ ընթերցուածներ , գիտութեամբ իրաւական նուրբ զանազանութիւններ , և հետաքրքրական շարքով ցիշ պայքարը : Աեզոն իր յատկանիշ մանկային անուշութիւնը փոքր ինչ կորոյս : Թոսքանայի հին լեզուին ընդհատ նմանութիւն ունէր քան արդի գաղղիական լեզուն :

Իրաւի՝ յունաց նորեղով տրամաբանութիւնն անաշու չէր բնառին ։ Տրամաբանութիւնը չկրնար անաշու լինիլ ուր որ գրեանք հազուադիւրս են և տեղեկութիւններն բերանացի կ'աւանդուին ։ Ամենուն յայտոնի է թէ ինչպէս սաէսլ ստութիւններ որ՝ երբ թղթի վրայ ներկային , խօսյն երեան կ'եղնեն , իբրեւ անժխտելի փաստեր կ'անցնին երբ Բարլամէնդի մէջ , դատարանն կամ առանձին խօսակցութեան ատեն վարպետութեամբ և ճոռոմաբանութեամբ կ'արտաբերին ։ Ասոր պատճառն ինքնայայտ է ։ Չենք կարող ի մօտուսա բաւական զննել որ թերութիւնը տեսնենք . չենք կարող նիւթին բոլոր մասունքն իրարու հետ շուտ մը համեմատել ։ Մի մասը կ'մոռնանք՝ մինչև որ ուրիշ մաս մ'որ առաջնոյն հետ յարակցութեամբ սխալ ընդունուի , մեր աչաց ներկայի . և որովհետև անջինջ կերպով չեն յիշատակուիր մեր ընդունածը կամ ժխտածը , ուղղակի հակասութիւններ գիւրութեամբ կ'սպրդին կ'սահին ։ Յոյնի մը բոլոր դատաւարակութիւնն խօսակցելու և մտիկ ընելու վրայ կ'կայանար ։ Առաւելարութեան մասին ունեցած կարծիքն ժողովին վիճաբանութիւններէն կ'բաղէր ։ Եթէ գերբնականութիւն ուսնելու փափաքէր՝ փոխանակ զբոլմ մ'առանձնանալու , կ'եղնէր շիտակ հրապարակ կ'իջնէր որ սօփեստ մը փնտռէ ։ Բայց այնքան վարժ էին այս սովորութիւններու որ գրուածներն անգամ խօսակցական ձև մը կը սկսէին ։ Խմաստասէրներն տրամախօսութեան ձևն ընդունեցան՝ գիտութիւն հաղորդելու իբրեւ ամենէն բնական եղանակը ։ Իրենց պատճառաբանութիւններն այս տեսակ շարադրուածքի յատուկ եղող արժանիքն ու թերութիւններն ունին , և աւելի նշանաւոր են արաղաբանութեան և նրբամտութեան կողմէ քան խորիմաստութեան և ճշտութեան ։ Ճշմարտութիւնն մաս առ մաս և ընդ աղօտ կ'ներկայի ։ Հարեւանցի շատ մ'ընտիր նշոյլներ կան , բայց հաստատուն և յարատեւ գրութիւն մը չերկիր ։ Argumentum ad hominem (անձնական փաստ) որ վիճաբանութեան մէջ կերպ մ'աղղու պատճառաբանութիւն մ'է՝ բայց հանրական սկզբունքի հետադուտութեան համար բոլորովին անօգուտ , իրենց սիրական զինուոյ մին է ։ Հետեւապէս՝ թէև հիանալի է այն ճարտարամտութիւնն զոր Սոկրատ կ'յայտնէ՝ Պլատոնի մէջ բերած կամ հնարած խօսակցութիւններու մէջ , սակայն իր յաղթութիւններն՝ ըստ մեծի մասին՝ մեղի ապարդիւն կ'ընդունին ։ Յաղթանակ մը կ'ընդունին , բայց մարդկային մտքի ստացուածոց նոր դաւառ մը աւելցուած չկայ ։



ՎՐԱՑԻ Ե՝ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Միբեւոյ իմ Մամուրեան ,

Անագործուն մահը ոիրուն մանկիկ մը յափշտակեց զրկեց , մանկիկ մը՝ զոր փայփայանօք սիրած ու զրկած ատենդ՝ զայն ապագային մէջ իբր ճշմարիտ հայր՝ ազգին և մարդկային ընկերութեան ընտիր անդամ՝ մը պատրաստելու քաղցր և գեղեցիկ յոյսերը կը տածէիր սրտիդ մէջ , և ահա անգութ մահը նոյն ամենաքաղցր յոյսերդ վայրկենի մը մէջ ջնջեց ու անհետացուց քեզմէ : Ո՛հ , իբր հայր , և քեզ նման իբր վշտակիր մէկը՝ ծագիկ հասակներու մէջ սիրուն զաւկներու կորուստն ունենալու համար՝ կ'զգամ ծնողական վիշտերդ , և զձեզ մխիթարելու համար չունիմ խօսք մը ըսել՝ բայց միայն յիշեցնել Յօբ երանելոյն խօսքը և կրկնել ինծի պէս « Կամք Տեառն օրհնեալ եղիցի : Տէր ետ և Տէր էառ » . այս է մահահանգուացի բաժինը , այս է բնութեան անշնչի օրհնքներէն մին , և այս՝ Աստուծոյ ահաւոր և անփոփոխելի վճիռը՝ որու պարտին հպատակիլ ամեն հոգածինք : Այո , անմեղ հրեշտակէ մը բաժնուեցար . և թողուց նա սրտիդ իր յախտնական բաժնման գնուն յիշատակը . այլ նա ըսաւ սուրբ հաւատոյ մերոյ՝ հողը հողոյն յանձնելով՝ թուաւ անտրաւ հողովն այն երանելեաց բնակարանը՝ ուր այժմ իւր հասակակից հրեշտակներու հետ անհունապէս կը հրճուի . երանի՛ նորա հողոյն որ ունայն աշխարհիս ցաւերն , վշտերը , հոգերը , երկիւղն և յուզմունքը առանց նորա յստակ ճակատը թառամելու , հրաւիրեցաւ նա կանխաւ երկինք , փառաբանել այն անհուն սիրոյ արժանի Դէակը՝ որ առ ինքն կոչեց այսօր ձեր սիրուն հրեշտակը :

Սիրելիս, կ'ուզէք երկինքէն լսել ձեր հրեշտակին ձայնը, կարդացէք հետեւեալ տողերը, զոր յատուկ 'ի յիշատակ մահուան ձեր սիրելի զաւկին հիւսելու արժան համարելովս՝ կը խնդրեմ՝ յանձնել զայն 'ի հրատարակութիւն ձեր պատուական Ա. Մարտիկոյ նամակաւ հանդերձ:

22 օգոստոս 1874:

Բարեկամ ձեր

Ս. ՉԱՔԻՆԱՆ

Ընդ ցաւալի կորուստ մանկանդ սիրելի
Հայր վշտակիր, ցողեա՛ արտօսըր աղի.
Ձոր 'ի գիրկ քո փայփայէիր ջերմ 'ի խանդ
Ձի՞ վաղ թռեաւ նա յերկնային պերճ դրախտ:

Ո՛ր քո, մանո՛ւկ սիրուն, աղու հայեցուած,
Ո՛ր քո ճակատ ընտիր եւ դէմք գեղանի.
Հի՛մ վաղ ընդ փոյթ փակեցեր զաչսդ, ա՛ղանեակ,
Եւ զծնողացդ ընդ քեզ տարար յոյս համակ:

Մի՛ դու մայրիկըդ վշտազգեաց Արուրայ,
Դանակակիծ մի՛ եւս ողբար դու ըզնա,
Ընդ լուսակէզ սերուք սլացաւ 'ի յերկին,
Անդ հանգչի նա 'ի գիրկ խնարհ Յիսուսին:

Լո՛ւր, զի՞նչ տատրակ քո 'ի վերուստ բարբառի
Ընդ այս սիրտ քո գորովալից շարժեսցի.
«Մայրիկ, գոչէ, զիտեմ, վա՛նս իմ յոյժ լացեր,
«Ձեն մոռացօնք ինձ ծնողական խնամք ձեր:

«Փոխարինեմ խընամոց ձեր աղօթիւք
«Մաղթեմ անդու Աստուածային շնորհաց սիւք,
«Մի՛ այլ վա՛նս իմ արտասուեսցիք 'ի յերկրի
«Զի եմ հըրեշտակ 'ի լուսամբ խորանի:

«Երկինք են իմ սքանչելի կայարան
«Աստ հիւսեցաւ ինձ ոսկեմել պատմութեան,
«Հընչեմ քընար տեառն Աստուծոյ առաջի
«Մի՛ եւս հեղջիք արտօսք յիմ ցուրտ տապանի:»

ԱՆՍԱՀՈՒԹԻՒՆ

Հոգին պիտի ապրի, գիտեմ և կ'հաստատեմ սկեպտիկեաններու գէտ՝ որ հանդերձեալ կենաց վրայ կ'տարակուսին, բաղմաստուածեան ներու գէտ՝ որ զայն կ'այլափոխեն:

Քայց ուր և ինչպէս պիտի ապրի, ինչ պիտի ընէ կենաց այս հէգ փախստականը, ինչ պիտի լինի իր սիրած անձերէն և բնական երկրէն մեկնելով: Ո՛վ չէ ըրած այս հարցումն իւրովի, մանաւանդ այն ժամերուն երբ սիրաւ կ'տրամի և կ'ամփոփի: Ո՛ր մարդն՝ որչափ փիլիսոփայութեամբ պարծի՝ փորձ չէ փորձած մահուան դաղանիքը թափանցեալու, թէ և քաջ համոզուած լինի որ այդ դաղանիքն անթափանցելի և նոր ճակատագրի մը պայմաններն զգալի կերպով պատկերելն անհնարին լինի:

Ամառնային գեղեցիկ գիշեր մը, գիշեր մ'երբ միտքն անհուն անջրպետի մէջ կ'մոլորի և իբր յայտնանդիման պարզեալ աստեղափայլանա համանութեան մէջ կ'յափշտակուի, կայ մարդ մ'որ գէթ մի անգամ այն փառահեղ բնակարաններէն, այն խորհրդաւոր խոստումներէն, որ անուրջներու բնական հայրենիքն է, հրապուրուած չլինի: Կամ այն չարագոյծ օրերու մէջ երբ կեանքը ծանր է, երբ լոյսն անգամ սղալի է, մեզնէ ուր մէկն երկնից վերնադաւառներուն մէջ պատսպարան մը փնտռած չէ: Ա՛հ սկիւնք առ մնարն բարեկամի, սողականի, սիրասուն դաւի մ'որ հոգին աւանդելու մօտ է. ինչ պիտի դառնայ այս հոգին՝ քիչեւին կայծն ձգելէն ետեւ այն ճակտին վրայ որ կ'դունափ, իր յետին նշոյլն՝ այն աչաց մէջ որ կ'մարին: Եւ արդէն սրտի անզուսպ խանդով ուղեկից կ'լինինք այն հէգ հոգւոյն որ իրեն հետ կ'քաղէ կը տանի մեր հոգւոյն մէկ մասն, թերևս լաւագոյն մասը: Հրաշագեղ Եւ գէտ մը կ'երազենք անոր համար, լուսասփիւռ կրդոյ մը մէջ անոր կը միանանք, անոր հետ կ'բերկրինք փառազարդ երանութեամբ, որու համար այս կենաց բաղմայոյդ ուրախութիւններն և թշուառութիւնները փոխանակեց: Ո՛վ կարող է բանահիւսութեան և հաւատոյ, երազի և յուսոյ այս վտեմ միլիթարութիւնը մերժել: Խորհրդաւոր վերնադաւառներէ մեզ բաժնող անդունդն աւելի կ'հրապուրէ մեզ, քանի միտքը կ'ընդարձակի:

Ահա այն ատեն ամէն մարդ բանասէլու է, և իրեն ընդի կերպով այն անմահութիւնը կ'երեւակայէ: Ըստ կարգի՝ ամէն ժողովուրդ բանասէլու՝ իր յօժարութիւններուն և սիրելեաց դրոշմը կ'գնէ իր խորհրդոյ մէջ: Միտք, բնաւորութիւնը, հաւատք, քաղաքակրթութիւնը կ'գրոշմունին այն հազարաւոր կրօնական աւանդութեանց մէջ, այս է հանդերձեալ կենաց վրայ ճառող վէտերու և քերթաւորութեանց մէջ, զորս մարդիկ, ազգեր և դարեր իրարու կ'աւանդեն անդադար պլափոխելով: Նոյնն է բնաբանն, անմահութիւնը. նոյնն է տենչն, անտեսանելոյն տենչը: Բայց այս միակ բնաբանին վրայ ինչ հիանալի զանազանութիւններ կ'տեսնուին՝ նիւթամէտ երեւակայութեան կոշտ ձևերէն սկսեալ մինչև նրբին իտէականութեան յղացումները . . . : Նէվածնի շատ երկար չափի երեւէր յաւիտենականութիւնն՝ օրինաց աղբիւրները, տիեզերական կարգին սկիզբը նկատելու համար, և ոչ Պէթհօվէնի իտէական դաշնակները մտիկ ընելու, որոց հեռաւոր արձագանքն իր հանճարը ներշնչեց, և ոչ Պէագրիչէի սիրողին՝ իր սիրոյն անսպառում հեշտութիւնը վայելելու համար: Բայց Նէվածնի մի առաջարկը Պէթհօվէնի արքայութիւնն, ոչ Պէթհօվէնի՝ Տանդէի արքայութիւնը: Ամէն մէկուն իր երկինքն և իր հանդերձեալ կեանքը պէտք է, որ կառնայ այս երկրիս, այս կենաց, իր ամենէն լաւ ճանչցած և սիրած մի քանի բաներով զայն դարգարել . . . :

Ի. ԳԼԻՐՕ

ՄԻ ԽՅՍԷ ԼԵՒՈՆ Զ.Ի ՎԻՍՅ

Այլադէմներէ անհաշտ ատելութիւնը, նրանց բռնակալ հողոյ կրքերը, նրանց միշտ միակողմանի յարաբերութիւնը քրիստոնեաների հետ, ծնեցրին այն արիւնահեղ սպատերազմները, որք յայտնի են Խաչակիրների սպատերազմներ անունով: Այս ժամանակից սկսվում է Հալսերի մշտական թշուառութիւնը: Որովհետև մեր թշնամիները թէպէտ մինչև հիմա օրինակ տարին մի անգամ էին յարձակվում և շոշա

գիւղի միւսներ հասուցանում մեղ, այնուհետեւ բան ու գործ շինեցին
սուրը հանած Հայերի գլխին կանգնել և ամեն բոսէ սպառնում էին
կլանել ամբողջ Հայաստանը :

Այս բաւական չէր : Խառն կրօնական հարցերը, հէնց նոյն իսկ
քրիստոնեաների մէջ, բռնում էին քաղաքական և կենսական խնդիրնե-
րի տեղը, որից բնականաբար բխում էին ոչ թէ նախանձելի կուսա-
կցութիւններ, այլ թշուառ երկպառակութիւնք, որով և քայքայվում
էր մի ազգի կապը :

Ար. քննական հայեացք ձգելով Հայոց ժամանակակից պատմութեան
վրայ, ևս համարձակվում եմ ասել որ վերոյիշեալ պատերազմներն աւե-
ղի վատ, աւելի դառն հետեանքներ ունեցան մեղ համար քան թէ օ-
գուտ, որ կարող էինք ստանալ Եւրոպացիների յարաբերութիւններից :

Պատերը, այն տիեզերական իշխանները (Քրիստոսի եկեղեցուն բո-
լորովին հակառակ) անդադար դրդում էին Քրիստոնեաներին դէպի
շիջեալ պատերազմները, որ լինում էին Պալեստինայում, և Հայաս-
տանն էլ հեռու չէ այնտեղից, որ և մասնակցեց : Եւ ի՞նչ, յաջորդ և
խկապէս տանուշորորդ դարում մեր քաղաքական անկախութեան ճա-
կատաղիքը հասնում է իր ամենողորմելի վախճանին, յիշեալ անցքերի
շնորհքով : Մահէտականների, Յոյների և հարեան ազգերի հա-
րուածները բաւական չէին, կաթօլիկութիւնն էլ իր ուղղափառ վար-
դապետութեամբ միւս կողմից աշխատել էր Ունիթոնների բոյնը հա-
տատել Հայաստանի խորքերում ու քնայէս որսում էր անմիսներին :

Մեր կողմից էլ անայնպէս, խաւարասէր Բռնեցիներ և սրանց նման
կուրայած Հայեր միշտ սրատրաստ էին կատարել Ունիթոնների մոլե-
ռանդ ցանկութիւնը : Այս դարուայ մէջ այնպէս սառել էր Հայերի ա-
րիւնն ամեն տեսակ հարուածներով, որի տաքանալու էլ ճարը չկար :
Ազդասիրութիւնը, հայրենիք պաշտպանելը, սուրբ և մաքուր միաբա-
նութեան վրեժ խորհուրդն անյայտանում է մեր միջից և կարծես քա-
ղաքական անկախութեան հետ կորցնում ենք և բարոյական և մտաւոր
յատկութիւնները :

Կիլիկիա նստող Հայ թաղաւորները Ղևոն առաջինից սկսած մինչև
Ղևոն վեցերորդն այսպէս թէ այնպէս չէին ներկայացնում այն ոյժը,
որ ունէր Հայաստանը շատ ժամանակներում :

Ես չեմ կամենում, ոչ այն ժամանակի Հայոց պատմութիւնն և ոչ
թշուառութիւնները պատմել : Սրա համար հարկաւոր է հաստորներ :
այս յանգիւնութիւնն ինձանից հեռու է : Սակայն ուզում եմ միայն մի

Երկու խօսք ասել մեր Լեւոն Զ. թաղաւորի վրայ, որի դերեղմանին անցեալ օրը այցելութիւն գնացի Փարիզից ոչ հեռու Սէն-Պընի քաղաքի մայր եկեղեցում:

Ինչպէս պատմութիւնից յայտնի է Վոստանդին չորրորդի մահից յետոյ Նիշիկիան ընկնում է աւելի ու աւելի անկարգութեանց մէջ, թաղաւոր ընտրելու վերաբերութեամբ, որ տեւում են երկու երեք տարի. այս մի ներքին քաղաքական պատերազմ էր: (Այս պատերազմը փոքր ինչ թուալ էլ կար, սակայն՝ որ զօրքը սղաննեց իր թաղաւորներին՝ Վոստանդին Բ.ին և Գուխտոնին:) Հայոց զորապետները չէին կամոնում ոչ իրանցից և ոչ ուրիշ ազգից մէկին թաղաւորեցնել, սրանով մեր ազգը վշտայի տառապանքներին էր ենթարկւում. . . : Այս միջոցից օգուտ քաղելով հարեան ազգերը յարձակւում են Հայերի վրայ և վերջին հարուածն են տալիս: Կարծես մեր հարեաններն իրանց նախահայրերից կտակած ունէին զաղանական յարձակմունքներն անպակաս պահել Հայաստանի որդւոց վրայ:

Աերջապէս Ուրբանոս Զ. պապի միջնորդութեամբ, կամ լաւ է ասել, յանկութեամբ, Նիշիկիայի զահի վրայ բարձրանում է հողով մարմնով կաթօլիկ Լեւոն Զ.ը: Սա Յոյն Լուսինեան տանից էր. այս տունը թաղաւորում էր Նիպրոս կղզում, որի թաղաւորները հեռու մօտիկ ազգակցութիւն ունէին Ռուբինեան տան հետ: Պապից ընտրած Լեւոնն ՚ի հարկէ ամեն ժամանակ պատրաստ էր սլաշտպանել սլապութեան նպատակները և այս պատճառով չէր կարող մեծ համարմունք տնենալ Հայերի աչքում, որք ՚ի բնէ հակառիտ են իրանց հայրենի դաւանութեանը (որ այս ժամանակ աւելի թոյլ էր) և առաւելարիւնակից թաղաւորներ ունենալում: Սրանից էր որ հայերն էլ չեն մաքառում թշնամեաց գէմ, այլ զղուելով այնպիսի վատ գրութիւնից, հաղարներով զաղթում են զանազան երկիրներ:

Թէպէտ Լեւոնին ոմանք անուանում են քաղցր բնութեան տէր, լաւ վարվող (որ կարելի էր աւելի ուրիշ տեսակ յարաբերութեանց մէջ) բայց պատմական փաստերից շատ լաւ երևում է, որ թաղաւորը հմուտ չէր փոքր ՚ի շատե քաղաքականութեան, ինչպէս իր ժամանակի դրութիւնից կարելի էր պահանջել: Բաւական էր քաղցրացնել յարաբերութիւնը Եղիպտոսի դրան հետ:

Մտաբերենք այստեղ Լեւոն հինգերորդին, որ երբ պատերազմից պատիկ նեղացած անձնատուր եղաւ Եղիպտոսիներին, Սուլթանը նրանով չբաւականացաւ, այլ ստիպեց մեր թաղաւորին երգչու Լաւոն:

տարանի և սուրբ խաչի վրայ, թէ այսուհետեւ Պապերի հետ յարաբերութիւնները չպիտի շարունակես, այլ խաղաղութեամբ լինես Եղիստոսի դրան հետ։ Այս մի դատ կարող էր լինել Լեւոն վեցերորդին։ Բայց չէ, նա զերպանց էր համարում Պապերի հետ զործ տեսնել, որով թշնամիներէն զրդուում էր և իրան ակարայնում։

Հարկաւոր ժամանակ փոխանակ զօրքին, ժողովուրդին խրախուսելու, թաղչում էր և անյայտանում, ուրեմն և ասպարէզը բաց էր թշնամիների առաջ։ Լեւոնը մի պատերազմից յետոյ այնչափ ժամանակ չէր ելուում, որ շատերը կարծեցին թէ մեռած է պատերազմի մէջ։ Մարիամ թաղուհին պատրաստութիւն տեսաւ ամուսին զտնելու . . . ուղղում էր պատկոյիլ Բրաունշվայգի Օտտոն իշխանի հետ . . . Սա էր պակաս Հայերին։ Բայց բարեբաղդաբար Լեւոնը այս խնամն խօսութեան ժամանակ երեցաւ, որ շատերին խնդութիւն պատճառեց։

Այս ժամանակում խաղաղութիւնը մեզ համար անկարելի էր կարծես։ Մահմէտականները չէին մոռանում խաչակիր պատերազմների դառն հետեանքները, ընդհակառակն նրանք միշտ անմոռանալի պահում էին իրանց սրտերի մէջ նորա ոխը և կամենում էին վրէժխնդիր լինել։ Մահմէտականները լաւ էին գիտում Հայերի և Խրոստոյանների մէջեղած յարաբերութիւնը. այստեղից զուշակութիւններ էին անում նոր խաչակիր պատերազմների, որից վախենալով միտ դրին ամենեւին արմատախիլ անել Հայաստանի դահն իր ժողովուրդի հետ միասին, որոյ յիշեալ պատերազմների արբանեակներ էին համարում նրանք։

Այս նպատակով և Վիպրոս կղզու պատերազմի վրէժխնդրութիւնից զրդուած (որի մէջ Լեւոնն էլ մասնակցել էր Եղիստոսի դէմ) մեր վերջին թաղաւորի և հետեաբար քաղաքական դահի հոգեհանը — Մէլիք — Էլ — Էշրէֆ Շաբան Եղիստոսի սուլթանը զօրքի անհամար բազմութիւն Վիլիկիա է ուղարկում, որ քանդում է քաղաքներ, զիւղեր և դեանի հաւասարացնում ամեն բան։ Բայց չէին կարողանում ամուր Ասպան բերդն առնել, ուր ամրացել էր Լեւոն իր ընտանիքով և հարազատներով. ինն ամիս պաշարելով հաղորդակցութիւնը կտրեցին դրսի հետ և Լեւոնը սուլից ստիպուած անձնատուր եղաւ։ Իսկոյն թշնամու զօրքը համարձակ շարունակեց զործ գնել իր վայրերի սրի բերանը։ Այսպէս 1374ին Վիլիկիայի դաշտերը էլի ներկրւում են Հայերի արիւնջով, յուսահատեալ Հայ ժողովուրդը ցիրուցան է լինում։ Լեւոնը բռնուվում է իր ընտանիքով և ուղարկվում Եղիստոս, որտեղ փակւում են նրան բերդում . . . իսկ Վիլիկիան, Հայաստանը այն ժամանակ ան-

տէր, անդոր և անօգնական մնալով ներկայացնում են մի ուրիշ տեղ տարան իրանց ամեն տեսակ աւերակներով: Ահա թէ ինչպէս թլայել էին Հայերը:

Եօթը տարից յետոյ Կասախլիայի Յովհաննէս թաղաւորի խնդիրքով Լեւոնը ազատւում է բերդից: Գնում է ուխտ Երուսաղէմ. . . : Այն տեղից ուղևորւում է Ստանիա շնորհակալութիւն մատուցանելու իր ազատող Կասախլիայի դահակալին: Տեսնւում է Եւրոպայի թաղաւորներին հետ, որոնցից մի քանիսն կամենում է հաշտեցնել, բայց չէ յաջողւում: Աւելորդ է ասել որ Պապին ըստ կարգին այցելութիւն է տնում. և այս ամենը կորցրած դահն և թաղը կրկին ձեռք բերելու նպատակով: Կարծես թէ Աստուած պատերին և Եւրոպայի թաղաւորներին էր նշանակել Հայոց թաղաւորներին թաղաւոր Բագրատունեաց ցեղի տեղ: Բայց Եւրոպացիքն էլ յոգնել էին արևելքի դործերից, էլ չէին ցոյց տալի մի քանի դար ունեցած աշխոյժն ու սէրը արևելքի վրայ: Պապերի խօսքերն էլ, կոնդակներն էլ մի ականջով լսւում, միւս սոփն էին դուրս դնում ու Լեւոնը մնում էր առանց որ և իցէ օգնութեան: Այնուհետև մօտ 12 տարի շարունակ տրամութեամբ է անցնում մեր թաղաւորը Եւրոպայում իր օրերը, որ Լեւոնի և շատերի կարծիքով առանց պապերի ու եւրոպական տէրութեանց անխորելի էր ամիսքել:

Այս կերպով 1393ին նոյեմբեր ամսին վախճանում է Լեւոն Գարիշի մէջ, որտեղից տեղափոխւում են ննջեցեալը և թաղում վերայիշեալ քաղաքի մայր եկեղեցւոյ մէջ, աջ կողմը, ուր թաղած են Գրեանայի թաղաւորներ և երեւելի իշխաններ:

Ահա, թէ ինչ լուռ թիւն բերեց մեզ կաթողիկոսութիւնն իր վարդապետութեամբ: Ասենք թէ, շատ կարելի էր և բնական այն ժամանակ խաղալիկ գառնալ կաթողիկոսութեան ձեռքին, բայց այժմ տառնուլիններով դարում դարձեալ չղլալ այդ մեծ սխալը և էլի կուրօրէն ենթարկուել նրա ուղղութիւններին, ինչպէս որ քննում են կաթողիկէ Հայերը դժբաղդաբար, ինչ կ'անուանէք այս վարմունքին, ասացէք ինչդեմ, ընթերցող:

Փարիզ, յուլիս 1874:

ՅԱՐՈՅ

(Կշմ)

Ընդհանրապէս ամէն լրագիր սովոր է՝ ազգային խնդրոյ մը վիճաբանութեան ժամանակ՝ հասարակաց կարծիքը վերակոչել և իր գտնիքն անոր վճռոյն յանձնել։ Կոն նաև լրագիրներ որ ընթերցողին առջև բարեփոխական կշիռ մը ստանալու և դրածին նպատաւոր դոյն մը տալու համար կ'սկսածին որ հասարակաց կարծեաց թարգմանն են։ Մէկ խօսքով՝ շատ անգամ հասարակաց կարծիքն իբրև գաղաւթ և վկայ կ'կոչենք, առանց փնտռելու թէ ինչէ՛ այդ առեանն և ո՞ր կ'գտնուի այդ հեղինակութիւնը։ Եթէ մեր լրագրութեան այլ և այլ գոյներն և մեր հասարակութեան մտաւորական և բարոյական վիճակը քննենք՝ պիտի հետևեցնենք որ ոչ այդ առեանը կայ մեր մէջ և ոչ այդ հեղինակութիւնը, այլ պարզապէս կուտակցութիւններ որոց իւրաքանչիւրն իրեն յատուկ շահը, նպատակը, գործին ու բերանն ունի, և ժողովուրդ մ'որ առկալն բուն իսկ ազգային կենսական խնդիրներու մասին որոշ սկզբունք մը, կարծիք մը չունի։

Կարելի չէ բմբուռել որ հասարակաց կարծիքը ըստաճը դոյութիւն ունենայ մեր մէջ՝ և յանուն այս կարծեաց ամէն օր, ամէն տեսակ ստուծիւններ, զրպարատութիւններ, անձուռնի սկզբունքներ թափին հրապարակին։ Ընդունիլ որ հասարակ կարծիք կայ մեր մէջ՝ ընդունիլ է որ հայք ըստ մեծի մասին ամենէն ստախօս, ամենէն անպատկառ, ամենէն զիւրահաւան, ամենէն անբարոյական, ամենէն սուղ և ժողովուրդն են ժողովրդոց մէջ, քանի որ թոյլ կ'տան որ ճշմարտութեան, արդարութեան, ազգային նուիրական շահոց դէմ, իրերու դէմ, մարդերու դէմ՝ դրական ոճիրներ գործուին, ճարակ ու քաջալեր դասն իր ծոցը։

Արեմն ինչպէս կ'յանդգնին լրագիրք ոմանք անգաղար հասարակաց առեանին վերակոչել, ինչպէս անոր թարգմանն ձևանալու կ'եղնեն։ Ասոր պատճառը սխալ է։ Այս տեսակ լրագիր մ'իրեն մասնաւոր շրջանն ունի, ուր կ'ներշնչուի ու կ'սնանի. այս շրջանն իր աշխարհն է, հետևապէս անոր մանր մունր շահերն ու անձնաւորութիւններն որ նիւթ թափէս իր շահոց կ'համադրատասխանեն, իրեն համար կենսական կարեւորութիւն կ'ստանան, այնպէս որ երբ բան մը դրէ, լուր մը հաղորդէ, առաջարկութիւն մը կամ խորհրդածութիւն մ'ընէ՝ թէև ազգայնաւ, անհիմն, երբ զրպարաէ, հայհոյէ, կ'կարծէ թէ բոլոր ժո-

զովուրդն իր և իրեն շրջանի մարդոց սէս գրածը կ'հաւատայ, և խորհի, կ'գատէ, կ'զրպարտէ ու կ'հայհոյէ, ուստի և այս իր կարծիքն իբրեւ հասարակաց խորձէ՛ք իր հեռաւոր ընթերցողներուն կ'ծախէ: Իսկ այն մէկ քանի լրջամիտ լրագիրներն որ անկեղծօրէն հասարակաց կարծեաց դիմելու փորձ կ'փորձեն և անոր ներդրածութեան կ'հաւտան՝ բնական մղման մը կ'հետեւին, եւրոպական լուսամիտ ժողովրդեան մը՝ վերայ մերինը՝ կ'գատեն, վասն զի ընդհանուր ունինդիրներու կողմէ՝ ուղղամտութեան, արդարասիրութեան, հանրական շահույցի պիտակցութիւն կ'ենթադրեն:

Արդ՝ այս ենթադրութիւնը հիմնաւոր է թէ ոչ, պարզելու պիտիջանանք:

*
* *

Ի՞նչ է հասարակաց խորձէ՛ք: Հանրական շահույց նշանակին է, ժողովրդեան մը խիղճն, գատողութիւնն է որ այս կամ այն խնդրոյ վերայ վճիռ կ'արձակէ: Այս վճիռն այնքան ուղիղ և օրինաւոր է որչափ որ խիղճն ու միտքը լուսաւոր և արդար են: Աղատ մամլոյ տէր և բարեկիրթ ժողովրդեան մը մէջ հասարակաց կարծիքը բարոյական օրէնք մը մ'է, որ երբ չճշուի, կ'ներդրուի ոչ միայն անպայայտ, անսիրտ անձերու վրայ՝ այլ և կառավարութեանց վրայ, և ասոնց անօրէնութիւնները կ'ուղղէ, կ'վարէ: Բայց հասարակաց կարծիքը դոյնալու համար այլ և այլ պայմաններ կան: Այս պայմաններն են բարոյական զգայում, իրաւանց և պարտոց ճանաչումը, ճշմարտին ու զեղեցիկին սէրը, զոր դատաւարակութիւնը կրնայ տալ, ուղիղ գատողութիւն, ազդային դրածոց ճշգրիտ հմտութիւն, վիճաբանութեան մէջ անկեղծութիւն, և այս ամենուն միջոցն ու պսակն օրինաւոր ազատութիւն: Ժողովուրդը մ'որ այս հանգամանքէ զուրկ է, ժողովուրդ մ'որ բարին չարին հետ կ'շփոթէ, իր բարոյական զգացողութիւնը խանդադուած է, իր ազդասքին իսկական շահույց անտեղեակ է, ժողովուրդ մ'որ այս պատճառներով սնոտի, աղտեղի և անձնական բանաւրուէ աւելի ախորժ կ'զգայ և սիրտ ու միտք զարդացընող միջոցները կ'մերժէ, այսպիսի ժողովուրդ մը չէ կարող մեր սահմանած հասարակաց կարծիքն ունենալ կամ ունենալու վիճակին մէջ գտնուիլ:

Արդ՝ հայ ժողովուրդն՝ և ի մասնաւորի Ա. Պօլսոյ ժողովուրդն ունի՞ այն բարոյական և մտաւորական պայմաններն որով հասարակաց կարծիք կ'կազմուի: Մենք կ'ըսենք թէ՛ չունի: Բաւական է միայն հա-

առարակաց կարծեաց յայտարար նշանները քննել։ Այս նշաններն են մասնուն ու քուէն։ Հայ լրագրութեան վիճակն արդէն ամենուն յայտնի է, և եթէ զայն ազգային կերպարանը ներկայացընող հայլի մը նկատենք՝ պէտք է ըսել որ շատ տղեղ և նողկալի է այդ կերպարանը։ Եթէ հայլին անկեղծ չէ, ժողովուրդն ալ շատ անտարբեր է որ դէմքն անոր մէջ կ'նայի, և 'ի վերջէ այս տղեղութիւնն իբրև բնական տիպար ընդունելու պիտի վարժի։ Լրագրութիւնն իր պարտքը չկատարեր մեր մէջ, վասն զի իր պարտքը ճշանշեր ըստ մեծի մասին։ Իր ազատութեան սահմանին մէջ կարող է շինել հասարակաց կարծիքն, սակայն այս ազատութիւնը ժողովրդեան յոռի կրից յազուրդ տալու, անձնականութիւններ վիրաւորելու, վատահամբաւելու կ'ործածէ, փոխանակ սկզբունքի հաստատութիւն, արդարասիրութիւն և հայրենասիրական ոգի ցոյց տալու։ Ազգային խիստ սկզբնական խնդիրներու մասին իսկ կ'ըստնուին մեր քանի մը նշանաւոր լրագիրներն և բոլորովին իրարմէն հակառակ շահույց կ'ծառայեն։ Ինչ որ՝ օրինակի համար՝ մին օգտակար կ'համարի ազգին՝ միւսը վնասակար կ'հռչակէ, ինչ որ մին իբրև առաքինի կ'ըսէ, միւսը կ'ամբաստանէ իբրև մոլի, այս՝ ունի իբրև Ջերմակ կ'ներկայացընէ, այն՝ երկուքին ալ տարբեր անուն կ'տայ։

Եթէ լրագիրներն (հարկաւ բացառութիւններ կան) տպւէս, ինչէն ընտրութիւնները։ Միթէ հասարակաց կարծեաց հարազատ բացառութիւններ են։ Ոչ, բնական։ Վասն զի շատ տեղ՝ ժողովուրդն՝ որ երբեմն իրար կ'անցնի երբ իր մէկ իրաւունքը վտանդեալ տեսնէ, դրեթէ բոլորովին անտարբեր կ'երևի երբ իր ամենէն նուիրական մէկ իրաւունքը դործադրելու, քուէ տալու կ'հրաւիրուի։ Այն ատեն տուպարեղը բայց կ'մնայ ճարտիկ, շահագէտ և կրքոտ մարդոց՝ որ ամէն օգտակար հիմնարկութիւն 'ի չար դործածելու հնարը գիտեն, և քուէտուին իրենց ճանկին ներքև կ'ձգեն, ուսկից՝ չէ թէ ազգին այլ իրենց անձուկ դպրոցներու և դպրոցարաններու ներկայացուցիչներ կը հանեն։ Այս տեսակ պառպանութիւններ իբրև երեսփոխան՝ ընդհանուր ժողովը մոտենելով, 'ի հարկէ ստորին շահերու, օտար ներշնչութիւններու պաշտպան կ'կանգնին և ազգին յառաջադիմութեան արդեամբ ծառայելու տրամադիր սակաւութիւն երեսփոխաններու ամէն բարենպաստակ խորհուրդները կ'խանդարեն, ամէն ազնիւ և ազգօգուտ զղացումները կ'սեղդեն։

Բայց ինչ որ լինի հասարակաց կարծեաց չղոյութեան պատճառն, ինչ որ լինի հայ մամուլին և ընտրութիւններու ուղղութիւնն ու ար-

դիւնքը, այս իրաւ է որ ազգին աղէտալի վիճակը կ'յայտնեն: Անհնար է որ այս վիճակը փոխուի առանց հիմնովին փոփոխելու մեր բնաւորութիւնը, մեր կրթութեան եղանակը, մեր բարքն ու վարքն, և առանց աղղաշէն յեղափոխութիւն մը բերելու բարոյսպէս և մտաւորապէս:

ԳԱՂԱԳԱԿԱՆ

Յաւիտենական խնդիրը՝ ՊՐԱՆՍԼՅԻ համար իր կառավարութեան տալիք ձեռն է: Այս ձեռն տակաւին չկրցաւ դասնել: Հասարակապետութեան ու ազատութեան լոկ անուամբ շատանալու դատաւարատուած է: Ամէն ամիս ծրագիրներ կ'շինուին այս մասին, աղմկալի նիստեր կը լինին, ազգային ժողովոյ լուծումը մօտալուտ և հանրապետութեան յաղթանակն անսկիւն լի կ'հռչակեն, բայց այս ամէն փորձերն 'ի դերե կ'եննեն: Ի զուր Բազմիւր Բէրլէ հասարակապետութեան համար առաջարկութիւն կ'ընէ ժողովին մէջ, 'ի զուր Մալլիլ նոյն ժողովին լուծումը կ'սրահանջէ, Քրանսա այնպիսի վիճակի մը մէջ ընկած է որ իրեն սովորական դարձած է, այսինքն անդադար սահմանադրութիւն մը կ'փնտռէ: 1789է 'ի վեր վեշտասաներազ ահամանադրութիւնը պիտի ծնի եթէ հասարակապետական դրութիւնը հաստատուի: Գաղղիացիք տակաւին որոշ չլիտեն թէ ի՞նչ սկզբանց համեմատ պէտք է կառավարել իրենց երկիրը: Քանի նոր կուսակցութիւն մ'իշխանութեան կ'հասնի, նոր քաղաքական օրէնք մ'իր հետը կ'բերէ:՝ Այս պիտի լինի իր առաջին զործը, և՛ փառք Աստուծոյ՝ Սիէյէսի արժանի յաջորդներ կան որ պարագային յարմար սահմանադրական օրէնք մը դարբնելու պատրաստ են, որ միայն թղթի վրայ հրաշակերպ մը պիտի լինի: Պարանսայի մէջ ամէն կառավարութիւն մեծ դժուարութեան կ'հանդիպի, կ'ըսէ Պ. Ժ. Մօրիսըն, վասն զի քաղաքական խնդիրներ

*Fortnightly Review,

քաղաքի կերպով ընկերական խնդիրներու կ'միանան ու կ'շփոթին : Այս դժուարութիւնն աւելի հանրապարական կառավարութեան վրայ կ'ծանրանայ , ըստ որում յատկապէս անորմէ կ'սլահանջեն լուծում մը : Եթէ Քրանստ արդէն մնայուն քաղաքական գրութիւն մ'ունենար , այս անպատեհութիւնն այսչափ մեծ չէր լինէր : Իր առջև կեցած քաղաքական խնդիրները միայն բնական են ահ ու դող ազդելու Յոլանդներու ժողովի մը . թող ընկերական խնդիրներն , ինչպէս գրամագլխի , տշխատութեան , կրօնի , դատարարական , որոյ վրայ թերեւս օգտաէտ կերպով վիճարանելու համար յարմար վայր մը չունի : Այս տեղ կ'նշմարենք այն ժայռն որու պէմպիտի փշրուի թերեւ հասարակապետութիւնն , մինչդեռ բռնակալութիւնն անկէ կարող է խոյս տալ : Բռնակալութիւնն ընկերական խնդիրներ կ'ջնջէ , կ'վանէ , և այս ընկելով իր արժանիքը կ'հաշակէ իբրև խաղաղարար : Բայց հասարակապետութիւնը չկրնար այս ընթացքին հետևիլ , այլ պարտաւոր է ի նկատի առնուլ , և այս ևս ընկելու համար անհրաժեշտ է քաղաքական շէնքը կազմել որ դորձէ : Այն ատեն ռաբիին կ'աղաղակէ և հաղորդէ , « Ինչ կ'ընէք ժողովրդեան համար » : Նոյնը հարցոյ Մարա Սահմանադիր ժողովին 1789ին , նոյնը Բրուսոն 1848ին , նոյնը պիտի պատահի երբ նոր ճգամը մը հասարակապետութիւն հաստատուի : Քրանստ գեռ ևս իրեն յատուկ գրութիւն մը չընտրած՝ քաղաքական և ընկերական ծանր խնդիրներ իր վրայ հասան : Այս մասին քաղաքակիրթ ազգերու մէջ մէկ հատիկ է . Սպանիա միայն մասնական բացառութիւն մը կ'ընծայէ , և Սպանիոյ մէջ ընկերական խնդիրը համեմատաբար երկրորդական է : Միապետական սկզբունքը՝ ազամանգի պէս հաստատուն է Ռուսիոյ և Բրուսիոյ մէջ , և ընկերական խնդիրներ՝ այս երկու տէրութիւններու միահեծան իշխանութեամբ լուծուեցան , այս է՝ միոյն մէջ սարուկներու աղատութիւնը և միւսին մէջ՝ ատատական գրութեան բարձումը : Պեժիա , Հօլանտա , Իտալիա , Շուէտ և Անկիլիա՝ խորհրդարանական գրութիւնն զոնէ յեղափոխութենէ կ'խուսի , և թէպէտ ծանրաքայլ , հուսկ ուրեմն ապահով է :

Իմ խորհրդածութեանց դործնական հեռւութիւնն այս է որ Պրանսայի մէջ խորհրդարանական հասարակապետութիւն մը դժուարաւ արմատ պիտի ձգէ : Այս վիճակն ոչ ապատութիւն կ'տանի և ոչ վիճաբանութեան վրայ հիմնեալ կառավարութիւն մը : Հանգոյցը շատ խառնուած է և չկրնար քակուիլ զբաւոր և բանաւոր խօսքով : Արագ , լին և յարատեւ գործունէութեամբ միայն յուսալի է որ քակուի —

դորձ պէտք է որ լուսաւոր մնայի, հաստատ կամայ և անկեղծ խորհրդոց դօրութեամբ ուղղուի: Քբանսա կարծես թէ կարօտ է ուժեղ մարդու մ'որ զինքը կառավարէ. չէ կարող նա յեղափոխական միջոցը մէկդի թողուլ, որ չարեաց պատճառ է, և նոյն չարիքը յարատեւ պահելու հակամէտ: Ես համոզուած եմ որ Քբանսա յեղափոխութիւններէ հրաժեշտ տալ պէտք է որ մահուանէ աղատի, պէտք է որ իր կառավարութեանց թերութիւններն ուղղէ, և ոչ թէ չհաւնած ժամանակը կործանէ: Եթէ մէկ երկու դար ևս սե է այս մշտաւեւ վրդովմունքը, Քբանսա Ամբիկեան-Սպանիոյ հասարակասետութեան վիճակին պիտի հասնի . . . : Անյառաջա՞ծ է օտարականի մը համար այնպիսի ծնդոց մը վրայ ծանրանալ որ սովորական երկայն վիճաբանութեան նիւթ եղած է դաղըլայոց, ըսել կ'ուզեմ հասարակային կենաց օր ըստ օրէ աւելցող ապականութիւնը: Յաւալի է թէ ինչ թեթեւութեամբ իբրեւ կաշառակուրծ կ'բամբասուին ազգային պաշտօնաւորներ: Աւելի նախադաս կ'համարիմ այս ողին կուտակցական դայոցի թի վերադրել քան թէ ճշմարտութեան վրայ հիմնեալ իրողութիւններու: Սակայն այս ստոյգ է որ կայսերութեան ժամանակի ապականութիւնն զերաշնացեց Լուի Ֆիլիպի կառավարութեան ապականութիւնն որ ժամանակակիցներու տոսկալի կ'երեւէր, և կայսերութիւնն երկար տևեց, ուստի ժամանակ ունէր խորունկ արմատ ձգել: Այս դժուարութիւններու լուծումն Քբանսայի աւելի յստակ մտաց և խիճին թողուլ պէտք է — արիասիրտ, ուղիղ մարդոց, աներկմիտ լինելով որ այնպիսի մարդիկ բազմաթիւ են իր մէջ: Իսկ ապագային նկատմամբ մարդ մը չէ կարող մարդարէութիւն մ'ընել: Օր ըստ օրէ աւելի երևան կ'երևէ որ Պօնաբարդեան վերադարձ մը, ըստ առաջնոյն կարծուածին պէս անուրջ մը չէ: Վտանգն նորատի հետամուտին դրդած համակրութեան վրայ չկայանար, այլ սա իրողութեան վրայ որ Պօնաբարդութիւնն ընդարձակ դրութիւն մ'է, ահադին միակցորդ ընկերութիւն մ'է դիտուտութեամբ, բարեկրթութեամբ և բաղնաթիւ «պատանդներ» զինեալ, որ Քբանսան որսալու կ'ներախն:

Այսպէս ուրեմն այլ և այլ պատճառներ հասարակասետութեան դալուստը կասկածելի կ'ընեն, և Մաք-Մահօն Պրընդայնի քանի մը քաղաքներ այցելութեան ելեր և հասարակասետութեան համար մաղթանք լսեր էր, ամէն անգամ որ առիթ մը դանէ կ'կրկնէ որ եօթնամեայ իշխանութիւնը, կարդ և անդորրութիւն պիտի պահպանէ, իր կառավարութիւնը՝ բանակին վրայ յենած՝ շատ հատուտ համարելով:

Դննամանայ բանտարդելու թեհէ ետև Պաղէնի փախուստն Սէնդ-Մար-
կրիտ կղզիէն, ուր Երկաթ զիմակն տառներկու տարի փակեալ մնաց,
մեծ աղմուկ և սրտմտութիւն գրգռեց ՚ի Ֆրանսա: Պաղէն՝ որդէս թէ իբ
կնոջ Հնարադիտութեամբ խոյտ տուած լինի բերդէն, ինչպէս որ առ
Մաք-Մահօն ուղղեալ գրով երկայն բարակ հաստատելու կ'ճգնի այս
կինն, սակայն զմնտ որական խուզարկութեանէ կ'երեի որ քաղաքային
պահապաններ աջակից զտնուեր են այս փախուստին: Եւրոպական տէ-
քութիւններն, բայց ՚ի Ռուսաստանէն ՍՊԱՆՅԱՅ Հաստարակապետու-
թիւնը պաշտօնապէս ճանչելով՝ զանազան մեկնու թիւններու և պատե-
րազմի զուշակութիւններու տեղի տուն: Նախաշարժումն դարձեալ
Պիսմարզ իշխանին կողմէն է: Պիսմարզ յատուկ շրջաբերական ուղղե-
լով գահէլճներու՝ Սէրրանօի կառավարութիւնը պաշտօնապէս ճանչ-
ելու այլ և այլ պատճառներ մէջ կ'երե: Այս ընելով՝ դրեց, կ'ը-
սեն, այն ուխտն զոր զերէին երեք կայսերք իրենց տեսակցութեան
ժամանակ, Եւրոպայի քաղաքականութեան վերաբերող խնդիրներու
մասին համաձայնութեամբ դործելու: Անտարակոյտ առանց նպատակի-
քայլ մ'անդամ չառնուր այս հռչակաւոր քաղաքադէտը, և ըստ երե-
ւոյթին՝ այս նպատակն է Վատին տէրութիւն մը բաժնէլ Ֆրանսայէն որ
արդէն Գարլօսեանց դադանի աջակցութեամբ կ'ամբաստանուի, այս
պահպանողական դրութեան քօղով՝ ամէն տեսակ անօրէնութիւն դոր-
ծող արսամբներու թեւը կտտրել, խորտակելով միանդամայն անդրա-
լեռնական դատն յոյսերն, որ Գարլօսեան հրոսակներու դասն իբրեւ
պապական դատ կ'նկատեն ու կ'արշտպանեն: Տէպայի մէկ թղթա-
կցութեան նայելով՝ ԳԵՐՄԱՆԻԱ մտադիր է իսկ ռազմնապէս միջա-
մտելու Սպանիոյ դործոց և թերևս Հօհենցօլէրնի իշխան մ'անոր դա-
հը բաղմնընելու, սակայն երևելի քաղաքապէսներ այս ենթադրու-
թիւնն անհիմն կ'համարեն: Ի հարկէ Ռուսիա խեթիւ կ'նայի Պիս-
մարզի այս ընթացքին և ՚ի պահանջել հարկին Ֆրանսայի կողմը պիտի
հակի: Սպանիոյ քաղաքային կռիւն՝ առանց զգալի արդիւնք մը բերե-
լու, կ'շարունակուի: Մօրիոնէս զօրապետն է այժմ հաստարակապետու-
թեան զիյցալնն որ մերթ ընդ մերթ մանր մունր յաղթութիւններ կը
տանի թշնամոյն վրայ և քաղաքներ ու գերիներ կ'առնու: Իսկ Տօն
Գարլօս յայտարարութիւններ կ'հանէ, իբրև թաղաւոր կ'խօսի և
վտահ կ'երեի բոլոր Սպանիան իր իշխանութեան ներքև դնելու:
Սակայն Պիսմարզի շարժումն իր ակնկալութեանց մեծ հարուած մը
տուաւ և Սմթ գերմանացի հաբեւբապետին՝ իբրև լրտես սպաննուիլը

Գարլօսեանց ձեռք , իրեն սուղի պիտի նստի : Ծաղլեական պատկեր մը Տօն Գարլօսն ու կրօնաւոր մը սարսափահար կ'ներկայացնէր , այն պէս որ իրենց սուրն ու ջահը գետին նետելու պատրաստ կ'դննուին հորիզոնէն վեր ելնող արեւուն առջեւ : Պիտմարդ իշխանին ճաղատող լիսուն ձեն ունէր այն երեք հանրածանօթ բեւեռաձև մազի թելերով որ դեռ ևս կ'զարդարեն մեծ քաղաքապետին գանկը : ԻՏԱԼԻՈՅ խորհրդարանին լուծումը հաւանական կ'երևի : Միջազգային ընկերութեան յարուցած խռովութիւններուն պատճառաւ այլ և այլ ձերբակալութիւններ եղան : Նոյնպէս Սիկիլիոյ մէջ պատահած վրդովմունքը խաղաղցնելու համար կառավարութիւնն զօրք զրկեց այն կղզին : Երեւանադորձներ անպատիժ կ'մնան , զինուորական ատեսաններ սիւտի կազմուն յանցաւորները դատելու և անկարգութիւնները բառնալու համար : ՊԵՂԺԻԱ դումարուած զեսպանաժողովն իր նիստերը լմնացուց . զեսպաններն յայտագիր մը ստորագրեցին՝ իրենց յատուկ կառավարութեանց ներկայացնելու համար :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Անկիոյ ազգային պարտք . Պիւտլէն առաջարկելու աւթիւր , դանաձուց պաշտօնեայն հարեանցի յայտնեց թէ Անկիոյ աղքատին պարտուց բովանդակ դումարն է Լ. սաէրլին 779,294,000 , որու 723,544,000 կայուն (քննաօլիտէ) , 4,479,000 անկայուն է , և 32,000,000 աւարտելի տարեհամներու (annuities) ձեռով է :

— Ժամացոյց . Յուլայի Պէրնէզ դաւառին մէջ ամէն տարի 1,290,000 ժամացոյց կ'շինուին 12,000 դորժաւորներու ձեռքը :

— Նաւաղն . Անցեալ չորս տարուան մէջ 18,363 բրիտանացի նաւատի մեռան՝ 12,242 այրի կին և 36,726 որբ թողլով :

— Այլանդալի կտրի՞ ժը . Մեռնելու ատեն անկիլիացի լըրտ մը կտակ կ'ընէ որ զիտիլը ծովը նետեն : Ատմբը կ'կատարուի : Իր աղղականներն այս տարօրէն կտակին շարժառիթն իմանալու հետաքրքիր , հարց ու փորձ ընելով կ'իմանան թէ՛ իր կինն՝ կենդանութեանը ժամանակ սովոր է եղեր ըսելու . « Ես քու գերեզմանիդ վրայ սիւտի պարեմ » :

ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

Տէ վրնբօրդի մէկ թատրերդու թեան մէջ կ'ընէմ այն դիւցազնն որ իր սիրուհւոյն վրայ կ'առնէր ինքնու կ'երթայ . անոր վրայ լսած բամբասանքէն հեռանալու կ'ստիպուի , թէ և զանի սիրած է և դեռ ևս խանդաղին կ'սիրէ : Օրիորդն անոր հրաժեշտ կ'տայ , աչքէն յորդ կայլակներ թափելով (և ես զլանիկս վար կ'զննեմ որ այդ հրաժարական բարեւը մեծաձայն կարգամ , նոյն պահուն այնպէս երեակայելով անպատշկառ թէ Ապսղէմիս նոյնն ինձ կ'կրկնէ) : —

Պնա՛ բարեաւ, Լօրէնցօ ,

Ջոր իմ սիրտ շատ սիրէ . թէ երբէք կարգուիս դու ,
Երանի՛ թէ զանես մի կի՛ն այնքան լաւ որ
Չերկրայիս անոր վրայ , ու նա ես քու կուսկած
Չըշարժէ բնաւին : Իսկ երբ լսես ընդ հուպ
Որ ես սեւ հողն եմ մտած , իմ յետին խօսք վնտոէ ,
Եւ պիտի իմանաս որ ցվերջ սիրեցի քեզ :
Եւ երբ դու ման գաս , քու այդ երկրորդ սրտով
Պաշտերու մէջ զուարճ եւ պատեհիւ խօսիս վրաս ,
Երեւակայէ զիս տեսնել նիհար , գունատ ,
Սփռելով ծաղիկներ շաղիւղ վրայ :

Հէք Ապսղէմիս : Անկարող եղաւ . Լօրէնցօն իրեն նման մէկը դնանէ
— Ներելի չէր նմանը գտնել այնպիսի Լօրէնցօի համար :

Աւրօտին վառելու համար կարեւոր է որ հին կրակն 'ի սպառ մնալած լինի . և միթէ ճշմարիտ կրակով վառ հոգի մը կրնայ պաղիլ , պաղիլ , բայց միայն գերեզմանին մէջ : Ամէն բանահաւանները կ'ըսեն , Ոչ : Օթէլլօ՝ եթէ հազար աարի անդամ ապրէր , վերստին չպիտի սիրեր , նոյնպէս Տէղաէմօնա , նոյնպէս Անդրոմաք , նոյնպէս Մէտէա , նոյնպէս Ողիսես , նոյնպէս Համլէդ : Բայց զլանիկս ախորժելի միոյն պատկերիուն մէջէն տեսնենք մի անդամ թէ՛ բան հիւսողներուն ըսածն որ աստիճան ճշմարիտ է :

Ի՞նչ է սէրը , մտածեցի 'ի սկզբան , բայց եթէ երեակայութիւն մը : Սիրուն առարկայ մը կայ որու կ'սեւեռի հոգիդ , ինչպէս աչքդ ախորժելի ծաղիկ մը , կամ ականջդ դաշնաւոր ձայնի : Փոքր ինչ ևս հիացումը քեզ կ'զրաւէ , իբրեւ անուաւոր կշիռ երեակայութեանդ արտակերպութիւն յեղաշրջումներուն , և հիացումդ ալ յարգական զգացումով մը կ'զգածուի : Արեւն թէ շատ յարգանք երեակայութեան թմբիկ կ'տայ և սրտի զգայական ներդրութիւնը կ'յապաղէ , սակայն և թէ գոյնը

ինչ անկից պաշար մնայ՝ ջերմեռանդութիւն կ'հրաւիրէ, և ասոյս այսօր
յատկութիւններն ու յօժարութիւնները կ'իմանրին և Սէր ըստած կենս
ասկան զգացումը կ'զառնան :

Այնպէս կ'երևի թէ սիրտդ քու էութեանդ մէկ ուրիշ լատացոյն
մասին անցաւ . քեզնէ մնացածն ուրիշ բան չերևիր բայց եթէ զող
ջուած հուշի մը լոկ փեճեկը : Այլայլութիւնդ չէ որ քեզ ուրիշ հո
գւոյ մը կողմը կ'մղէ, այնպէս որ կարող լինիս ըստ հաճոյս կարճել
կամ երկարել, այլ կիրք մ'է որ քոյդ է միայն վասն զի անք է, որ չափ
եղբար մնայ անդ, այնքան սուր կ'զգաս որ այն քոյդ է :

Իրաւի այս կրից ճարակ տուող հանդամանքը թերեւ քեզի պատկա
նին, բայց յառաջուց այսպիսի կրից ծնունդ տուած չէին երբէք, պար
զապէս անոր համար որ ծնելու առիթ չկար : Նախասես է բնութիւնն
այս տեսակ բաներու մէջ : Թութեւնը դուրս չցատկեր մինչև որ շե
րամն օդնական թև մը չստանայ . խեղին չխորտակիր մինչև որ թռչո
ւն շունչ չառնու, և ոչ ծիծեռնիկն իր բոյնէն կ'հեռանայ մինչև որ
թռեցուն վրայ օդային թիակները չեւոնն :

Սիրոյ այս դիրքն զօրաւոր է, որ չափ որ զօրաւոր լինի այն մթնո
լորտն որու մէջ կենսատու հուր կ'զանէ : Եթէ մի անգամ այդ օղը
պաղի սէրը մոխիր կ'զառնայ . քոյդ չէ այն, վասն զի չարժեք որ այդ
պէս սիրես . կենսատու չէ այն սէրն, վասն զի կորոյս հորն որու մէջ
կ'ծլէր : Սակայն ծանր յանդիմանութիւն մ'ըրած չեմ լինիր եթէ ըսեմ
որ այդ սիրոյդ ծնունդ տուող սրտի յատկութիւններն սպառած լինե
լով, չպիտի ծաղկին հորէն բոլոր կենացդ մէջ :

Քու սարբնայեղ հեռացումը ցեցակեր մոյթն, և աննեցուկ բաղեղիկ
երկրահակ ոստերն 'ի սկզբան չպիտի պատասխին որ և է ցանկի մը . կա
րելի չէ միամեայ սովորութիւն մը մէկ օրուան մէջ փոխել : Բայց եթէ
հոր հեցուկն ամուր մնայ, այն ատեն կարօտակեղ ծիւղերն իսկոյն օտա
բականին պիտի փարին և տունիդ իր նախորդ շքեղ տեսքը պիտի ստա
նայ, թերեւ իր խոնարհ գէմքով Անցելոյն մէկ յիշատակը զգուէ,
բայց իր ճշմարիտ և արդիւնաբեր կենաց մէջ Ներկային անուշ հպտա
կութեան մտադիր պիտի երևի :

Թող ինչ որ կամին ըսեն քերթողները . մեր սրտի յօժարութիւններն
կոյր չեն, ասուշարարածներ չեն որ բեւեռային տառնամանեայ ներքեւ
սովամահ կորնչին, քանի որ երկնից անուշաբոյր քամիներն ջերմու
թեան և արեգական առաջնորդող սահմանեալ ուղեցոյցներ են :

— Եւ փոքր ինչ շտապելով թղթի կտոր մը կ'սպասեմ, և կանթե

դիս լուսին բռնելով զարձեալ զլանիկս կ'վառեմ: Այնչափ հեշտ չլա-
ռիք, թերեւս ՚ի սկզբան — պէտք է տաքնայ որ բռնէ, բայց շատ
չանցնիր կ'բռնի կ'բորբոքի այնպէս որ սենեկին չորս անկիւնն նշոյլնեք
կ'արձակէ:

— Ճիշտ այդպէս է, մտածեցի, երկտասարդութեան սէրն, որ
մանկութեան շառաչու շողին կ'յաջորդէ, աւելի ընդորձակ բոց մը
կ'հանէ, թէ և նոյնչափ շուտ չբռնիր: Գողտրիկ ոտն մը, կամ դան-
դուր գիտակ մը, կամ անոյշ կապոյտ ական մը բաւական չեն. բայց նէ
որ այս նոր կրակը հրահրեց բոլոր այս բանեբէն զատ՝ հողոյ անու-
շու թիւն մ'ունի որ կ'ղրաւէ քեզ քանի ներս գէմքն ու շարժումը զի-
տես: Իր շնորհներն անուշ և զրեթէ անդլալի կերպով քեզ կ'հրապու-
րեն: Կ'տորհչիս որ ակորժելի ընկերու հի մ'է — ոչ այլ լինչ, և օրէ օր
այս կարծեացք մէջ ամբապէս կ'հաստատուիս — այնպէս լաւ կ'հա-
տատուիս, արդարեւ, որ կ'սկսիս զարմանալ թէ ի՞նչ պատճառաւ նէ
այնպէս զմայելի ընկերու հի մ'է: Այդ պատճառը չիրար նորա աչքը
լինիլ, վասն զի զրեթէ Նէլլին աչերուն չափ սիրուն աչեր տեսած
ես, չիրար բերանը լինիլ, թէ և Նէլլին բերանն իրօք շատ անուշ
է: Եւ կ'սկսիս շարունակ քննել թէ ի՞նչ շարժումի թ ունի ներս քովը
զանուէրու կամ ներս ձայնը մտիկ ընելու փափարդ: Այս քննութիւնն
հաճելի է: Չես կարող քան զայս հաճելի, կամ մտային նուազ ծան-
րութեամբ կատարելի քննութիւն մ'երեւակայել:

Յանկարծ՝ աղոր օր մը, երբ օգն հոտաւէտ է, և Նէլլի ձայնին և
ձևերուն յիշատակն աւելի ևս հոտաւէտ է, կ'զարմանաս թէ արդիօք
սէր ունիս: Երբ մարդ այսպիսի զարմաքցմ'ունի, կամայն է որ սիրոյ
շատ մօտ է, կամ շատ հեռու անտի. զարմանք մ'է որ կամիր ակնկա-
լութենէ կ'ներշնչուի, կամ զգացման շփոթութենէ որ իր բոլոր իմա-
յողութիւնը կ'ըմպընէ:

Բայց եթէ սէր չես զգար, դէթ հզօր երեւակայութիւն մ'ունիս —
այնքան հզօր որ դու անհոգս կ'ըսես բարեկամներուդ թէ նէ սիրուն
աղջիկ մ'է, մինչև անգամ, դեղանի աղջիկ մ'է: Սակայն քիչ քիչ կը
տաքնաս, և քու ընկերսիրութիւնդ և զարմանքդ հաստատուն, ան-
դորը և անլրիպելի սիրոյ սովորութիւն մը կ'դառնայ, բուն, արագ
և մոլեղին չէ այն, առաջնոյն պէս, այլ հասուն և հանգարտ: Որպէս
թէ այս սէրը հողոյդ հետ ծնած լինէր, և անոր ճանաչումն հինյի-
շատակ մը քան թէ նոր կիրք մը լինէր: Գիշերային երգերով կամ ան-
տառները շրջելով իր եռանդը սփոփելու չես աշխատիր, ներքին, ան-

գործը խնդուծիւն մը կ'վայելէս, որ ապագայ տարիներու վրայ յուսու-
լից կ'ծփայ, անոնց փայլուն տեսք մը տալով:

Տեսակ մ'իւղ, սպիւղանի մ'է այս սէրն այն ամէն բաներուն համար
որ մըրկալի էին և աղէտաբեր. էութեանդ մնայուն ժպիտ մը կ'ընծա-
յէ: Կենացդ ծովը չմըրկեր բունն այլայլութեամբ, որպէս թէ հոգի
ուժգին փէր, այլ կարծես թէ Աֆրոդիտէս մը ծովուն երեսը պատ-
ռելով՝ ծփանք կ'հանէ, որ անուշ և մեղմ ձայնով կ'տարածուին և
կ'ընդլայնին հեռուն մինչև ժամանակի եզերքը:

Հիմակ հարկ չիտ' ինչպէս մանկութեանդ ատենը, զոգացմունքդ այ-
լանդակ ուխտերով ամբասնդել. եթէ այս բանս փորձես իսկ անոր
առջև, բառ չես գտնուիր այդ ուխտդ բացատրելու: Այն ինչ բերանդ
կ'բանաս որ երդնուս, բառերը կ'խորշին և երգումը շրթերուդ վրայ
կ'թռթռի կամ միտքդ կ'բացատրես մատերու սեղմումով մը: Ծանօթ-
ներուդ հետ անհանդարտ, ծաղրելի դէմք մը կ'դասես և ներդաժէտ
նայուածքով մը կ'անարկես թէ կարելի է վիճակդ փոխես: Արեւիկին՝
երբ Նէլլիդ հեռու է, ամենէն անշահ ծաղիկներ կ'խնամես, և յան-
կարծական գութ մը կ'զգաս փողոցի մուրացկաններու համար որ իրենց
զուռատ դաւակնելով կ'թափառին: Ակամայ դեղը կ'երթաս սլոտոյտը-
նելու, և կ'ըզրմանաս թէ ի՞նչպէս իրարու կ'յաջորդեն պայծառ օրեր
առջի տխուր բնաւորութեանդ վրայ բնաւ մոռնալ մը չբերելով: Պան-
դոկիդ մէջ նոյն իսկ սպասուհիներն երբէք այնչափ լաւ իրենց սլոտա-
ւորութիւնը կատարած չէին, իսկ քու Թոմ ծառադ կատարուն ընկեր
մը դարձած է քեզի համար:

Գլանիկս պատուական կ'վառի. բայց մի անդամ մարեցաւ, կարելի
է վերստին մարի:

Ա'սկսիս ամուսնութեան վրայ խօսիլ. բայց կամակոր հայր մը կամ
խնամակալ հօրեղբայր մը կ'մտածէ որ անհնարին բան է, թէ շատ կա-
նուխ է, կամ թէ Նէլլին պարզադժիկ մ'է: Ամա քու մէկ քանի վայ-
րենի ազգականներդ — զոր լիովին մոռցեր էիր — մօր մը դերը խաղա-
լու կ'ենեն և քու ճակտիդ վրայ մոռնալ մը կ'բերեն: Ամա պառաւ կ'ինն
ուրիշ տեսակ փառասիրութիւն մ'ունի, թէ և դու իբրեւ պարզ, պար-
կեշտ, ժիր ամուրի մը, չես կարող անոր համալիտ գտնուիլ — վասն
զի միջակ կերպարան մ'ունիս, աշխարհային նորաձեւութեան անվարժ-
ես, և չես կամիր պառաւ և փառասէր կնկան թն ին ներքև յաւիտեան
շարժիլ:

Այս բաներն անշուշտ վշտալի սխալի դան այն երիտասարդին որ

քանի շաբաթ կամ ամիս երազային աշխարհ մը կ'ապրէր, ուր զբաղմունքներն ինքի ինքնուրուշ և փառասիրական հաշիւներ չկային, այլ առատահոս զգացումներու զմայլելի տղբիւր մը: Կ'ընչ պէտք ունիս կայտ թեան մը, եթէ ոչ սիրականիդ մօտ կայտ թեան մը, ի՞նչ հարստութիւն առելի գին ունի աչքիդ, եթէ ոչ սրտի հարստութիւն մ'որ երբեք չնուազիր, ի՞նչ համբաւ առելի կ'ընչատես, եթէ ոչ ճշմարտութեան և սպասողի համբաւը: Արչափ ծանր պիտի երևի քեզ այդ անորոշելի անսիրտութեան մօտ՝ դժնեայ ծեր խնամակալ մ'որ թեւ թեւէդ անցնելով կ'ըսէ քեզի թէ՛ սրչափ հոգ կ'տանի իր մօռքեռ աղջկան երջանկով թեան, և քեզի հետ կ'բանազարէ գոյն հասոյթիդ և անձուկ դործերուդ վրայ, և կը յորդորէ քեզ — վասն զի սրտագին հոգ կ'տանի շահերուդ — որ չշարունակես սէրդ:

Ահ բարեսիրտ ծեր ժլատը:

Թում սպասաւորդ յանկարծ տխմար տղայ մը կ'զառնայ և թողման ծաղիկներու համար ունեցած գութի կ'մարի: Թեքեա՛ բարկութեանդ ատեն՝ կասկած մը կ'ծաղի միտքդ թէ՛ նէ ևս կ'փափարի որ տեղի բարձր, առելի նշանաւոր, առելի հարուստ գիւղ մը, կամ ներկայ վիճակէդ տարբեր վիճակ մ'ունենայիր — խիստ վտանգաւոր կասկած. վասն զի ոչ ոք՝ եթէ հոգ ունի անհուկութիւն մ'ունի, չէ կարող իր սիրտն ուրիշին կամահաճութեան սարուկն ընել:

Բայց ո՛չ, չես հաճիր, չես կարող այդպիսի կասկած մը տածել Նէլլիի վրայ: Իր գէմքը շատ անուշ և շնորհալի է. և իր կերպերն, երբ ձեռքդ կ'ընէս սրտիդ տրտմութիւնը գիտելով, և իր չքնաղ կասկածաւորութիւնն՝ որ երկայն ու տամուկ արտեանունքէն քան զառաջին սքողեալ կ'երևին, մեկուսի կ'զարձրնէ, և իր փոքրիկ մասներուն փափուկ և իմաստալի սեղմումն և իր գաշն ու կէս հառաչն, և իր կործքին ելեէջն սիրոյ և պարտաւորութեան պայքարի ժամանակ, ամէն, ամէն ինչ կ'փարատեն այդ կասկածը: Կրնաս երգնուր որ Նէլլի՛ դորու վալիւր է և ներողամիտ, իբրեւ սիրասուն աբարած մը, քու ձախորդ վիճակիդ և երբեք քու զօրաւոր սէրդ և պարկեշտ սիրտդ չպիտի փոխէ երկրիս ամենէն մեծ վեհապետին հետ:

Ի՞նչ խթան է անկեղծ սրտի տէր կնիկն մը վստահ սէրն՝ աշխատութեան: Իր յետին սիրալիւր ակնարկը, յուսալիւր և քաջալերական, առելի մեծ զօրութիւն ունի իր մէջ հոգիդ մեծ մեծ դործերու մղելու քան թէ խնամակալիդ բոլոր խրատներն ու յանդիմանութիւնները: Սիրող՝ որ կ'բախէ յուսով լի, ըղբղկն վրայ կ'նկերդ դործէ ուժովն և անհնարին փափաքներ կ'երկնես մեծութիւն շահերու:

Ծանր, տաժանելի աշխատութիւնք միայն կրնայ անուն մը ստեղծ տել, և երկայն օրեր և ամիսներ և տարիներ պէտք են այդ սրբաշինի համբաւը շահելու համար, բայց երբ մի անդամ ձեռք ձգես, քու բուն ճանկիդ ներքեւ հարկւրաւոր կտոր կ'լինի այդ սրբաշինն որ վերստին դլխիդ վերը և կ'սաւառնին:

Ժամանակ առ ժամանակ դադարի տեսակցութիւն մը, և մէկ երկու սիրային սոմմալներ սրտիդ մէջ բոցը վառ կ'աւհեն: Բայց յանկարծ սրաին ձերու կ'անամակալդ — որ այնքան հոգածու է քու և ներաշնչոց — մինչև անդամ այս անկանոն և անբաւական դրակցութիւնը կ'արդիւնէ: Հետեւապէս՝ ներա կերպարանին շեղակի ակնարկներ նետելով կ'անահիս, կերպարան մ'որ առաջուանէ աւելի սրայծառ և շնորհալի է, և կ'ցախ որ այն շնորհապէս զէմքը՝ զոր ատեն ատեն կը տեսնես, դեռ ևս գեղմի է: Մեղմադձիկ սրտիդ հետ կ'մտադառնաս, զուարթ կ'ցոյցնես ինքզինքդ ներա, և շատ զուարթ՝ ձերունի ժլատին առջև, որ հոգիդ քաղեց: Չվայելք որ ակարութիւնդ մարդու մը յայտնես:

Ի վերջէ՝ սիրուն աւաւտ մը՝ լուր կ'զայ քեզ թէ նէ մեկներ է, այնքան հեռու որ չես կարող տեսնել, այնքան ծանր հակադրութեան ներքեւ որ չես կարող ներա մօտենալ: Պահ մը վար կ'նետես գրեանդ, և աշխատանքդ կ'թողուս յուսահատ — դառն դառն մամուռքի մէջ ընկնելով և անհնարին որոշումներ ընելով:

Իմ գլանիկս դեռ կ'վառի, բայց պէտք է շարունակ և ուժգին քաշել որ վառ մնայ:

Սիրային տենչդ քիչ մը կ'ամնքի մի քանի դիւրեր ըստ զխառածի ուղղելով, մինչև որ սովորութեամբ այդ սրտաշահան դիւրերն աւելի քիչ ջերմութիւն կ'աւհեն քան թէ ուսումը կամ գործերդ: Պառք Աստուծոյ, վիշտն ու բախտութեան պէս յառաջագէմ կամ գորաւոր չէ: Ատեն մը հաճոյք կ'զգաս այն արամութեան մէջ որով հատուկտոր յոյսերդ կ'յիշես և ինքնասիրութեամբ ներա յոյսերն ևս աւելի սրտիդ կը կապես, բայց տարակայուն թիւնն ու տղիտու թիւնն առաւարանքդ կ'մեղմեն: Նէլլիին նկարը կ'յիշես որ ուրիշ հեռաւոր տեսարաններ դարձաբես: Անոյալ որ արտասուելի ժպտին կայտառ խնդութիւն մը կ'յաշորդէ, և քու մամուռքդ որ այնչափ ատեն ներա սիրուն գէմքը սքօղեց, զուարթութեան արեւուն ներքեւ կ'թողի, կամ շատ շատ այդ մամուռքդ կարծես թէ այն տախտակ ճակատը կ'զոյսէ շարժուն ստուերի մը պէս զոր թափառիկ ամսը մ'արեւոյն դաշտի մը վրայ կ'արձակէ:

Իսկ քեզի համար, աշխարհ՝ իր մերկալից հովերով՝ կ'փարառէ այն անուշ և հեռաւոր ձայներն որ քեզի կ'հասնին սիրոյդ հին և հեղձուկ խողովակներէն: Ահա՛նք ծանր սլարալք կ'զնէ քու վրադ և չէ թէ մշտառն յաւեր: Այսպէս ամբսներ և տարիներ ուշիկ կ'սահին, սովորութեամբ քու ամուրի վիճակդ աւելի հեշտ և թեթև կ'դադնայ. դու բաւական ողբացիր և այժմ՝ ուրիշներուն ողբ ու կոծին վրայ կը ժպտիս, բաւական վայելցիր և այժմ չես հառաչեր ուրիշներուն դոյզն ինչ բերկրալի ժամերուն վրայ: Մութ ստուերներու հետ զմայլելի ծիրանեզոյն և ոսկի երանոյներ կենայ վրայ կ'երևին: «Բու սիրադ» թէև մոխրով ծածկուած՝ դարձեալ կրնայ առկայծիլ կիւսի մը քայլին շշուկը լսելով. և գէմբդ դեռ ևս կրնայ պաքելի զուարթուն ժպիտներով որ գրեթէ յոյսեր են — խայտալէն օրիորդի մը ներկայութեան:

Բայց դարձեալ՝ զլսուգ վերեն ասեն ատեն գիշերային յափշտակուած թիւն մը պիտի ծփայ, որով վերտալին պիտի լսես կարօտաղին ականջով՝ անյաժմ դադած օրերու հմայական ներգաշնակութիւնը. և սարսուռ մ'ղդալով պիտի սթափիս և քու մենաւոր, առնացի կենայ ողալ խորհրդոյդ մէջ պիտի դրոխ: Բայց այդ սարսուռը կ'անցնի այնպէս շուտ ինչպէս գիշերն առաւօտէն: Արտասուալի վիշտեր և կծու յիշատակներ քու հրակէզ, եռանդուն և փառասէր առնութեանդ ասպարը խորասկելու անդօր սլաքներ են: Անոնք իբրեւ վեհերոտ, սպիտակութեւ ճանճեր դուրս կ'սպրդին, սակայն երբ արշալուսոյ առաջին նշոյլներն երեւնին՝ կ'զաւարին և հողւոյդ մեկ անկիւնն անշարժ կ'մնան:

Եւ երբ՝ շատ տարիներէ ետք՝ կ'իմանաս որ սիրուհիդ կարգուեր կին եղեր է՝ սիրադ եռանդուն այլ անշշուկ թունդ կ'երէ: Ահա՛նք ու ժամանակը քեզ մոշեր են իբրեւ վաստակաբեկ որսական բարակ մը: Աշխարհ քեզ վարժ ըրեր է հեշտ և անիմաստ ժպիտներու: Անձկ կ'ամբ բաստանես կիսովին իբրեւ ազաշնորհ և մոռացկոտ, բայց այդ ամբաստանութիւնը քեզ չնեղեր. և ոչ իսկ ուշդ կ'դարձնէ առաւօտեան լրագրէդ: Չես կարող ճշմարիտ սրամտութիւն մը դրօշակ սրտիդ մէջ ձերունի պարոնին — ներա խնամակալին գէմ:

Ա' հառաչես, «Հէք տրարած» և շքեղ բաճկսն մը հաղնելով կ'համարձակիս առաւօտուն ներա ոյցելութիւն մ'ընել:

Նէ քեզ սիրով կ'զիմաւորէ — վայելուչ, հին ակիկն մը, պարզ կտուէ շքալուստ մը հազած, սանաթիւմը բարձր դադաթին վրայ զանդուրները հաւաքած է. և նէ քեզի կ'ներկայացնէ երկու փոքրիկ աղաթ կարմրուն հիւսիկէն վարապանակ հաղած: Եւ դու տիկնոջ հետ

կ'ճաշէս — ընտանեկան հացկերոյթ մ'է, և կախարդ զիմօք ծեր մարդը քեզ կ'բարեւէ ձեռքդ յօժարակամ սեղմելով, կ'ակնարկէ որ դու իր քրոջն աղջկան ամենէն հին բարեկամն էիր և կ'յուսոյ սր ողջ առողջ ես:

— Բոլորովին ողջ առողջ, արդարեւ:

Եւ աղաք կ'սկսին խաղալ երբ մերդը սեղանը կ'բերեն. Տէք քու սխակեզ սալոր մ'առնելու կ'ջանայ, Թում չձգեր որ իր վարդագոյն դէմքէն հայրը պաշիկ մ'առնու: Մէկ խօսքով՝ կարծես թէ բոլորովին սուռք ես. ժամ մը գինի խմելով կ'անցնես, կ'ծխես մարդավար մօրեղբօր և քու երկրորդ սիրոյդ խիստ քաղաքավար ամուսնոյն հետ:

Ամէն բան ուրախ զուարթ է սեղանին վրայ. վասն զի լաւ գինին՝ ինչպէս կարծեմ, ամուրիի մը սրտին ոյժ առողջ ըմպելի մ'է: Բայց ապա, երբ գիշերը մեղմիկ կ'հասնի, և կրակարանիդ բոցը կ'բեկբեկի քու մենաուր սենեկիդ մէջ, խորին հառաչ մը կ'արձակես: Եւ մինչդեռ միտքդ հենդամիտ Լուիզին կ'դառնայ, և առամբի հէլլին կ'յիշէ, կ'ողբաս այդ քու համր ու ողորմելի սրտիդ վրայ որ մոլեցին կ'փափաքի աղատ և խնդաղին դուրս թափիլ: Եւ երբոր կ'ծուխ ճակատդ ձեռքիդ յենած և աչքդ կ'ձգես թաղեայ խշտեկին վրայ քնացող շան, արցունքդ կ'սկսին հոսիլ և կ'ցաւիս որ տարիներ առաջ չես կարողուած սրպէս զի այժմ՝ զոյգ մը շաղակրատ աղաք ունենայիր որք ամայի սենեկիդ առանձնութիւնը վանէին:

— Գլանիկս չծխեր, բոլորովին մարեր է: Բայց ճշմարիտ ամուրիի մը յամառութեամբ՝ ուխտ ըրի որ վերստին վառեմ:

Գ.

ԼՈՒՅԵԻՌՈՎ, ԻՐ ՎԱՌՈՒՄԵՐ

Ա՛տեմ լուցիկի մը (match — նոյնպէս ամանակէն): Ստոյգ եմ որ ծծմբային լուցիկներն երբեք չեն շինուած երկինքը, և ցաւալի է մտածել որ՝ քանի մը բացառութեամբ, բոլոր լուցիկներն իրենց դադար ծծումբ ունին:

Բայց միմե հատաւ, և վառարանիս կրակը մարած լինելով բոլորովին՝ միայն լուցիկի մը կայ գլանիկս վառելու համար:

Ամէն լուսիկներն առաջին շփումով չեն բռնկիր : Կան նաև այնպէս
սխներ՝ որ շարունակ շփուելով իսկ կայծ մը չեն հաներ : Իրաւի՝ փոս-
փորեան զիսաւոր շողիկներ կ'ընողուն , բայց որչափ անհնար է անով
ղլանիկէ վառել , նոյնպէս չես կարող սիրտդ բորբոքել անձանթ կնա-
յին երամէ մը զոր զիւային , շողակրատ , տառաւ խնամքներ քու ճամ-
բուդ վրայ կ'դնեն :

Քսան Եօթն տարու եղնու ամուրի մ'իտկոյն լեզուանի սլառաներ ,
բարեմիտ կանամբի բարեկամներ անոր մօտ կ'յաճախեն անդադար՝ ուր-
պէս զի խնամուածիւն ընեն և անոր առջև սքանչելի օրիորդներ շա-
րեն : Ա՛ր տատանին երկար գիւրեր չէ ստացած իր մէկ սլաղամիտ մօր-
եղբօրը կողմէ խիստ ընտրելի ամուսնութեան մը վրայ , բարձր և
տոհմիկ աղջկան մը մասին :

Արդարեւ՝ ինչ զմայելի բան է հալումաշ ամուրիի մը համար՝ երբ
տոհմային զերդաստանի մը մէջ մանկելով կ'ծաղկի : Ինչ անդին զմայ-
լում կ'զգայ այն որ իր կենաց մէջ թեթեւոտն Հերմէսը սլաշտեր էր ,
երբ յանկարծ հին և սպտկաւելի տան մ'անդամը կ'դառնայ :

— Տէ՛ր վրայ , մտածեցի՝ ուժգին փշելով , ինչն համար մարդուս
սիրտ մը արուեր է , եթէ ոչ ընտրելու այն անձն որու վրայ իր սրտին
արեան մէն մի կաթիլը կ'հոսի : Ա՛վ պիտի թուսէ դէն հոգւոյ այն ա-
լէժուփ կոհակներուն դէմ , որ կ'թաւալին լուսնակէն աւելի զօրաւոր
մտլորակի մը հրամանաւ , և այս մտլորակն է Աստղիկը : Ա՛վ պիտի փո-
փոխէ իմ բաղձանացս հողմայոյցն , երբ իմ երկնից երեսէն անցնող քա-
մին զայն սպայմանեալ կողմը կ'դարձնէ անդու :

Ասիկց զատ՝ դրամի ամուսնութիւններ կան , անշահախնդիր ամու-
րիներ կ'յորդորեն քեզ որ ստակով կին առնուս , և կ'իպիաքին քեզ
տեսնել զերդաստանի մը զլուխը : Եւ պէտք է խոստովանիլ որ այսպիսի
յորդոր մ'անուշ հով մ'ունի որ աղասլ մարդու մը փառասիրական ե-
րաղները գդուելու ամենէն ճարտար շարժաւթիմ է : Բայց թող դժնե-
րես կինը զիս չդատաստարտէ՝ այս խօսքիս վրայ՝ զայն աւարտելէն ա-
ռաջ :

Ստուգիւ խնդաղին բան մ'է մտածել մտախոհ ամուրիի մը համար՝
թէ այն սիրուն աքիսներն որ քու մտածին կնկանդ թափանցիկ զոյնը
կ'աղնուապրէ , կամայն կոճակն որ այնչափ դիւթիլ կերպով իր չքնաղ
կլոր կուրծքին վրայ կ'երևի , կամայն շնորհալի լանջապանն , բոլորո-
վին սքանալարդ , որ այնչափ քնքշապէս կ'զրկէ իր թիւրամբեր իրա-
նը , միշտ նէրա հրամանին ներքեւ սլիտի դանուկն — մանաւանդ , ա-

առնը դեռ ևս նշանաւորներն են երվն երին երանդներու որոյ ներքե սիտի սնանիս ներա դեղեցիութեամբ : Ա՛փափաքէի զխնալ թէ արդեօք երեակայութեան հեշտութիւն տուող նկարներու սիրուն թանգարան մը չէ այն անուշկնկանն , որ շատ մը բարեկամներ սիրոյ , համա-կրութեան և հիացման կ'հրապարէ՝ իր հարստութեան համետ աղա-տաբաշխութեամբը : Միթէ ախորժելի չէ յուսալից հողիդ անուշանել այս առատութեան մէջ , որ ոչ միայն ներա պիտոյքը սիտի հայթա-թէ , այլնաւ իր մարդասիրական հաճոյից ալ սիտի բաւէ , որ տրամու-թեան մուսլն ներա ճակտէն սիտի վանէ և ներա համբոյր բնութիւնը սիտի զտէ , ասոր աւելցնելով զթասէր հրեշտակի մը շնորհը :

Միթէ փոփելի չէ , երբ այս ասեղներն ամուրիութեան կորստա-բեր մոլութիւններն քու վրադ կ'ձանրանան , ընդնշմարել այն շքաւոր թաղաւորութեան մէջ , որու բնիկն Յոյսն է , տան մ'անդորրութիւնն որ իր հրապոյրներով շքեղ և զանաւր հայթաթեղ կնկան ներկայու-թեամբ իրական կ'դառնայ : Ճշմարիտ վկայ , կ'մատնէի ես՝ ծխելը շարունակելով , այսպիսի ամուսնութիւն մը ներքին համակիր զղացում-ներու շնորհաստարտ լոյս մը սիտի բերէ , և տրամադիր եմ նաւ ըսել որ այսպիսի միութիւն մը կրնայ զօրութիւն ազդել ամենէն վերացական սիրոյն :

Պահ մը կայ առ և խորհէ . մեղի տէս հէք արարածներ ինչ կ'սի-բեն : Ա՛սիբենք՝ եթէ զլանիկ ծխելով առանձին դատենք , անուշու-թիւն , դեղեցիութիւն , վեհանձնութիւն և իմացականութիւն և քան զայս աւելի , փոխադարձ սէր , որ բոլոր այս յատկութիւններով կաղ-մուած է , և օրէ օր , ու ամէն ամիս քու հողոյդ վրայ կ'տարածուի՝ իբրեւ արեւային առաւօտ մ'որ զիշերուան ցորտը կ'վանէ :

Բայց հարստութիւնն կատարելագործութեան մեծ միջոց մ'է . ա-նուշութեան համար դրաւական մ'է , քանի որ վրդովիչ անձկութիւն-ները կ'փարատէ . նոյնպէս իմացականութիւնը զարդայնող սիրուն զրդուիչ մ'է , քանի որ անոր ընդունակութեան շախիղները կ'բաղմա-պատկէ . առատաձեռնութեան դեղեցիկ հիմմ'է . նոյն իսկ դեղեցիու-թիւնը կ'զարդարէ , քանի որ աշխատութեամբ ձեռքերը չանդացը-ներ և երեսի խորշմներն շուտով չբերեր : Բայց արդեօք փոխադարձ սէր , անձնուրացութիւն , անուշ վստահութիւն և հանգարտ ոգով մը կ'զրդուէ որով սիրտդ ուրախութեամբ սիտի ընու , ահա այս տա-րակուսելի է : Երբ հարստութիւնն այսչափ շատ կ'շնորհէ , փոխարէն շատ կ'սրահանջէ , և մամունայի շնորհաստարտ եղող հողին , միշտ պատ-

քոստ չլինիր մեծադոյն սիրոյ շնորհասպարտ դանուելու : Գժուարին է
զոհ ընել անոնք որ զոհ ընելու բան մը չունին :

Աստուած օգնէ այն մարդուն՝ որ սիրոյ մանր մունք խաղերով իր
հոգին կսկսածներու և յաստղութիւնքու մէջ մաշելէն , կամ իր աւոյդ-
երկոսասարգութեան թարմութիւնը վատնելէն ետեւ՝ կ'մանէ վերջապէս
այն ճամբան զոր ուսմկօրէն զրամական կամ տոհմական գեղեցիկ ա-
մուսնութիւն կ'անուանեն :

Աստուած օգնէ քեզ (զլանկիս մոխիրը փշեցի) երբ կ'սկսիս ամուս-
նութիւնն իբրեւ արդոյ հիմնարկութիւն մը միայն նկատել և՛ քանի մը
ծեր բարեկամներու խորաթին համեմատ՝ կ'սկսիս չորս կողմը նայիլ որ
արդոյ կին մը գտնես : Թերեւս ներա կերպարանին և գերդաստանին
վրայ զարմանաս , և ասոր ժամաօք յիշես քու մէկ քանի խորագէտ բա-
րեկամներուդ յատուկ մէկ յիշատակութիւնը՝ թէ նէ մեծ ակնկալու-
թիւններ ունի : Ա՛մաժեւս որ քու սեղանիդ զլուխը պատուական երեւ-
ոյթ մը սկիտի ունենայ նէ , և թէ իր բարեկրթութեամբը հանդիսա-
ւոր պարագայի մէջ քեզ սեւ երես չպիտի հանէ : Նէ լուս , շատ լուս կը
խօսի . և ներա գէմբը հրասպոյր ունի , մանաւանդ երբ քիչ մը զրդուի :
Ներա հարուստը վայելուչ է և ճաշակաւոր և բոլոր բարեկամներդ
անդադար կ'ըսեն թէ « Գեղեցիկ անձ մ'է » : Սակայն պտուաւ կին մ'ո-
րուն նստարանը կ'բազմի նէ երբեմն կիրակի օրեր , կ'մտածէ ներդա-
ժէտ քթիթով մը թէ ընտրած անձդ աղւոր կնիկ մը սկիտի լինի — ու-
րիշ մարդու մը համար :

Ճշմարիտը , վայելուչ գէմբ մ'ունի նէ . և քու վեցի չափ՝ հին սի-
րու հիններուդ ամուսնութիւնն կ'աղքարարէ քեզ թէ ժամանակը կ'սահի
կ'անցնի և յաջողութեան յոյսն ալ կ'տկարանայ : Եւ կէսօրուան կերակու-
րէն ետեւ՝ մէկ զուարթուն տաք ժամուդ՝ կ'որոշես՝ ըզեղիդ մէջ ունենա-
լով ներա գեղեցկադոյն մուշտակով քաշուած նկարն — թէ պիտի կար-
դուիս : Այնուհետեւ կ'սկսիս վայելել որսի հաճոյքը , և թէ և ընտանե-
կան պատշաճութիւններով պաշարուած է նէ , դարձեալ աւելի մեծ և
հաճելի զրդիւ մը կ'տան քեզ : Ժամ մ'աւելի կ'անցընես հայլիդ առ-
ջեւ և գերձակիդ մէկ երկու հարիւր ոսկի աւելի կ'տաս : Ամէն ինչ կա-
նոնաւոր , պատշաճ և շնորհալի է : — Շարժող զգայուն կին մ'է , ինչ
պէս ամէն մարդ կ'ըսէ , և դու ևս կ'հաւտաս : Խօսակցութեան մէջ՝
ներա հետ համախոս կ'դանուիս զրականութեան , եկեղեցւոյ և ծա-
ղիկներու մասին : Անտարակոյս ընտիր ճաշակ ունի նէ , վանս զի՛ քեզ
կ'ընդունի : Այդ ընդունելութիւնն ազնիւ , վայելուչ և նոյն իսկ մար-
դավարական է :

Ամէն կողմէ շատ շնորհաւորութիւններ կ'ընդունիս, և քու հին բարեկամդ Թում քեզի կ'զրէ թէ 'ի լըոյ զիտէ որ շքեղ կնկան մը հետ պիտի կարգուիս. իսկ բոլոր պառաւները կ'ըսեն. «Ի՞նչ փառաւոր նշանաւոր» : Եւ քու առաւտուրի ընկերակիցդ, որ կանամբի մարդ մի է և փոքր ինչ խեղդատակ, անկեղծօրէն քեզի խնդակից է : Աւերջապէս այդ խնամութեան մասին քիչ մը կ'ստործիս : Հին գաւառաւորնակ բարեկամի մը կ'զրես, թէ քիչ ատենէն այս ինչ փողոցը բնակող օրիորդ Շարլօզին հետ պիտի ամուսնանաս, թէ նէրա հայրն երբեմն շատ աւնդանի անձ մ'էր, և յետագորութեան մէջ կ'յաւելուս թէ՛ աղջկին ունեւոր վիճակ և «ամիսկալութիւններ» ունի : Գուրաւրեկամբ, որ կին մ'ունի զոր կ'սիրէ և կինն ևս զինքը կ'սիրէ, պատասխան կ'զրէ քեզի, «յուսաւով որ երջանիկ կ'լինիս» և դու ևս նոյն յոյսն ունենաւով՝ զլանկիդ կ'վառես, քու ամուրիի վերջին զլանկիդ իր նամակին լուսանցքովը :

Ամուսնութիւնը կ'կատարուի, փառաւոր հարսնիք մը կ'ընես. կնոջդ ազգայ մօր և հօրեղբորդիներն քեզ վայելուչ ընդունելութիւն կ'յուզնեն և նէրա ամուրի քեռ խներուն հետ շատ մը զինի կ'խմես : Եւ դու երբ նոր հարսին քնքուշ ձեռքը կ'բռնես, նոր հարսն որ փառաւոր կ'փայլի իր հարսանեկան պսակով և պոյծաւ գէմբով — աչքդ և հողիդ, առաջին անգամ կ'յորդեն : Եւ երբ թեղ նէրա վայելչադեղ հասակը կ'բոլրէ և զանի քեզի կ'քաշես, զգալով որ նէ քուկդ է, այժմ սիրող այնպէս կ'արուիէ որ նոյն պահուն կ'մտածես թէ կեանքդ առլի է և իրապէս կ'վայելէ : Միտքդ բոլոր հին երազներովդ կ'պաշարի՝ իրբն թովիչ երաժշտութիւն, և երբ նէրա վրայ կ'նայիս, հիւրերուն հիացումը կ'զիտես, քեզի այնպէս կ'երեւի որ սրախդ փափաքները լցուած են այս բարեբաստիկ ամուսնութեամբ :

— Ա՛խ քաշեցի՛ նորէն զլանկիս մոխիրը թոթուելով, հարսանեկան նկարներ անական նկարներ չեն, և խորանին տոջն անցած ժամն վառանդաւ տարիներու տխուր մէկ տիպարն է :

Տունդ վայելուչ կերպով շտկուած է. Շարլօզ պատուական տնտեսուհի մը ձեռք ձգեր է, և քեզի սեղանակից լինելու համար եկող հին բարեկամներուդ շնորհաւորական զովեսաներն անման քաղցրութեամբ կ'ընդունի : Եւ այս հիւրերը կ'ըսեն քեզի՝ երբ սեղանին լաթը կ'վերցընեն և դու կ'նստիս հանդարտ կ'ծխես հին ատենները յիշելով, թէ նէ չքնաղ կին մ'է : Նոյն իսկ պառաւ կնիկն որ ատեն ատեն նպաստ խնդրելու կ'դան, կ'մտածեն թէ Տիկինը աիկիններու տիպար

մ'է, նոյնը կ'մտածեն և իր վաղեմի խնկարկուսներն զորս նէ այնպէս հեշտ ու ընտանի շնորհքով կ'ընդունի որ քեզ բաւական կ'շփոթէ : Եւ երբ պարահանդիսին սրահին գուռը կ'կենտա՝ առաօտեան ժամն երկուքին՝ Շարլօզին շալը թեկդ վրայ ձգած, կաթոցին պատանի մը ընդհանուր կործիքը պիտի հաստատէ քեզի ըսելով թէ Տիկինն չնաշխարհիկ պարող մ'է, և պարոն Կոման անչափա պիտի գովէ ներազազը կարէնը : Այս ամէն գովեստներուն համար շնորհասպարտ ես, բայց այդ շնորհասպարտութիւնդ անսովոր ծանրութեամբ կ'բացատրես :

Կ'մտածես թէ պէտք է որ շատ երջանիկ մարդ մը լինիս, այլ սակայն երեւակայութեանդ մէջ ստուերներ կ'սարդին, և կ'ըզմանաս թէ այդ ստուերները Շարլօզին տեսքովը չեն փարատիր, այն Շարլօզդ որու վրայ կ'ըմպէիր երբեմն իր հազած սիրուն զգեստով. բայց ընդ ունայն : Չես իշխեր ներազողորիկ մէջքը թե երովք բոլորելու առահի որ շրջապատին ծաղը չարես : Բազաքավար է նէ քեզի հետ, և փափկասիրտ քու աղապ բարեկամներուդ հետ : Աղնուութեամբ կ'խօսի — իր գոպկին կապը կ'շալէ — և կ'յուսոյ որ աշխարհիս մէջ գեր մը պիտի ունենաս՝ գերողաստանին անունը փառաւորելու համար : Արասոր մը չարատեր երբէք ներազ պար, և սակայն կ'ժպտի երբոր քանի մը սքանազարդ պատանիներ սեղանակից ունիս :

Թերես ատեն ատեն կ'դիտես որ նէ զիրեր կ'ստանայ, որոյ ստորազրուութեան անտեղեակ ես, և իր խնկարկունքէն մէկ քանին այնչափ յաճախ կ'երթեկեն որ հպարտութիւնդ կ'վիրաւորի : Անպատահ է նախանձ յայտնել, բայց «սիրականիդ» կ'ախարհես թէ իր վարմունքը փոքր ինչ անվայելուչ կ'գտնես :

Կարելի է կ'փափաքիս սաստիկ որ ձեր մէջ վէճ մը ծագի որպէս զի վիրաւոր վստահութեանդ մէկ փորձը ցուցնես, բայց ոչ, ամէն ինչ խաղաղ է, և նէ վստահութեամբ կ'սնդէ (քեզ «սիրելիդ իմ» անունն ըսելով) թէ իր կացութեան արժանապատուութիւնը պահպանել զիտէ :

Իսկ դու սրտովին շատ հիւանդ ես, ուստի ոչ բացատրութիւն կը խնդրես և ոչ պատասխան մը կ'տաս :

— Եւ միթէ միջ է քու երբեմն երազած հոգւոյ միակցութիւնդ. միջ է այն հոգելից համակրութիւնն որ կենաց դառնութիւնը պիտի ջնջէր և տաժանելի հոգեր պիտի ամբէր բարեսրտութեան և սիրոյ շնորհիւ : Բարէ, այժմ վերստին կարող ես քու աղապ վիճակիդ դառնալ, ժամերդ լրացիր կարողալով, թատրոն գնալով վատնել, և

տխոր կեանքդ անարդիւն վարել։ Հին բարեկամներուդ հետ աշխուժութեամբ խօսէ, և չունեցած խնդու թիւնդ կեղծէ, թէ ոչ վատ աշուն մը պիտի ստանաս տանդ և գլխուդ վրայ։ Զգոյշ եղի՛ր որ Շարլօդ չտեսնէ այն արատւոքն որ դառն ժամերու մէջ թերեւ աչքէդ հոսին, կամ՝ չլսէ այն հառաչներն որ յանկարծ սրտիդ խորէն կրնան ելնել երբ միայնակ կ'սորհնի։ Շարունակէ կեանքդ կեղծելով ինչպէս որ սխալ։ Փառաւոր ամուսնութիւն մ'էր, և դու փառաւոր ամուսին մ'ես։

Բայց, գոհութիւն Ատուծոյ, փոքրիկ տղայ մ'ունիս, որու կողմը կ'սրանայ հոգիդ ազատութիւն։ Երբ աշագ իր կանոնապահ դայեկին քովէն և դասերէն կ'ազատի, կ'ախորժիս զանի մինակ պտնել, տարիներէ ՚ի վեր սրտիդ խորը թաղուն կեցած համակրական զգացումդ անոր վրայ թափել։ Անոր հետ կ'ստղաս, զանի կ'զգուես և սրտիդ վրայ կը սեղմես։

«Բայց, հայրիկ» կ'ըսէ աղան «նայէ ինչպէս ճմրդեցիր վիզնոցս։ Ի՞նչ պիտի ըսեմ մամայիս։

«Ըսէ անոր, տղաս, որ քեզ կ'սիրեմ։»

Ա՛հ, մտածեցի (զլանկիս կ'մարմնէր և կ'անհամբեր) միթէ սրտիդ մէջ տեղ մը չկայ որու երբէք չէ հասած նազելի կնոջդ թաթարանաւոր ձեռքը, թէ և կ'փափաքիս որ հասնէր։

Արթիւր հեռաբնակ բարեկամ մը տեսնելու. «փառաւոր ամուսնութիւն» չէր իրենը. շատ տարի քեզնէ առաջ կարդուած է, և սակայն իր կնոջ լուսավայել նայուածքն և սիրտիւր ժպիտն տարիներ առաջ կողածին պէս թարմ են և պարկեշտ, և դու ամօթապարտ կ'մնաս անմխիթար վիճակիդ վրայ։ Ընդ երկար տարակալ կ'դանուկա տունէն, բայց ընտանեացիդ զիրերը չեն սախեր. քեզ որ շուտ վերադառնաս. սակայն հրաշալի մտքուր զիրեր են, և զազդիական ձմեռ իբրեւ վերջաբան ունին։ Ա'փափաքէիր որ տղագ ալ բան մը մրոտած լինէր՝ այն յետադրութեան տեղն ուր նոր օրէրայի խմբի մ'անունները նշանակուած են, և այս բանս մեծ հարուած մ'է սրտիդ։

«Պէն» կ'ըսէ նէ «շատ վատ կ'զրէ։»

Իսկ ՚ի դարձին ուրախութեան մեծ ցոյցեր չես տեսներ. ամառնային ուղևորութեան մը զրդուած ախորժելի երազներուդ հետ բաղդատելով՝ քու խօսարանդ ներս մտնելուդ, շատ վայելելուդ, շատ հանգարտ, շատ նորաձև կ'դանես, և կարծես թէ սրտիդ կեղևն է։

«Ի՛նչ ատենէն» հիւանդութեան տաղտկալի օրեր կ'սպաշարեն քեզ.

սլատուական հիւանդապահներ ունիս, խիստ յարգի հիւանդապահներ, հիւանդապահներ որ երբեք չեն սխալիր, հիւանդապահներ որ ընդ երկար ծառայած են ընտանիքին մէջ: Բայց, աւագ, համակիր տիրտ մը, անուշ գէմբ մ'որ ցաւերուդ վշտակից գտնուի, փախստեայ ամպերով անուշ գաշտանկարի մը տէս, բնաւ չեմ տեսներ:

Մերթ ընդ մերթ ճաշխարհիկ կինդ ներս կ'մտնէ, հիւանդապահին կ'հարցնէ թէ արդեօք հանդարտ քնացա՞նք, և ապա դուրս կ'սահի՝ իր մետաքսէ շրջազգեստին շրջիւնն լաւ ելով՝ իբրեւ չոր տեւեւեւեւ խօշիւնն, որ կ'շարժին ձմեռնային հովէ մը: Կամ թեմեւ՝ աթոռ մը տեղը դնելէն կամ անկողնին առաջատին աւելի վայելու չծալ մը տալէն ետեւ՝ քեզի կ'հարցնէ ձայնով մ'որ գուցէ համակրական թուէր՝ եթէ օտարոտի չլինէր քեզի համար, թէ արդեօք ուրիշ բան մը կարճէր ըսել:

Ըստ կարի անուշոթեամբ շնորհակալ եղիր նէրա և աչերդ ողջելով երազէ. կամ ելիր նստիր անկողնիդ մէջ, ձեռքդ փոքրիկ տղուն զլիսուն վրայ դնելու, որ կենդանութիւն և երջանկութիւն քաղես անոր անկեղծ նայուածքէն՝ մինչդեռ ակնադիշ կ'նայի նա դունաւոր և նիւն ճակտիդ: Ժպտող անդամ՝ որ դժնեայ է երկարատեւ աղէտից պատճառաւ, սողուն այլայլութիւն կ'աղղէ. ձեր մէջ թարգման մը չկայ, բայց եթէ սիրտը:

Քու պապական շրթունքդ այլանդակ կ'ներդործուն տղուդ կայտաւ և կենսաւէտ գէմբէն. և նա չորս կողմը մատերուն վրայ կ'բալէ՝ հիւանդապահ կնիւնն շղթայրին վրայ, որպէս զի սեղանին վրայի վարդադոյն դեղերը նշմարէ. անկիւնէն ցուպդ կ'առնու, իր ձեռքն անոր փղոսկրեայ կատարը կ'բռնէ, և իր նայուածքը սրտէն կախուած պատկերներուն կ'ածէ, մինչև որ իրեն ծանօթ մէկ կենդանադրի վրայ կ'յառի — հաբսանեկան հազուստով կենդանադիր մը — պեղանի, դրեթէ սիրասուն, և որդիդ կնքղնիքը կ'մոռնայ և բարձրաձայն կ'ըսէ. «Ահաւսիկ մաման»:

Հիւանդապահ կինն իր մատը շրթերուն վրայ կ'դնէ. քունէդ կ'արթննաս որ նայի թէ եռանդոտ աղադ ի՞նչ կ'նայի, և քու աչերդ ալ կարելի եղածին չափ կ'սեւեռին կենդանադրին վրայ, որ այժմ նուազուն երեակայութեանդ իբրեւ ստուեր կ'երեւի, իսկ աւելի ստուերային քու նուազուն սրտիդ:

Օր ըստ օրէ կենանք կ'հալի, բժիշկը կ'ըսէ թէ քու վախճանդ մօտալուտ է, և լինչդէս մօտալուտ չլինի: Տան տիկինն ու որդիդ կը

հրախրուին սենեակիդ : Աչքի մոթ կ'տեսնէ , քեզի ձայն կ'առն որ նէ անկողնիդ մօտ է . ձեռնդ , երկու ձեռներդ ալ դուրս կ'հանես : Կ'երեւակայես թէ հառաչ մը կ'լսես , այլանդակ հառաչ : Կարծես թէ հեռուոր տարիներէ կ'հասնի ականջիդ , շփոթ և կիսատ հառաչ մը , որ կենացի բոլոր շրջանը կ'բռնէ . և սրտիդ բղխեալ հառաչ մը , անլսելի , ներա հառաչին կ'սպաստխանէ :

Քու գողգոթուն մատերդ քու տղուդ ձեռքը կ'սեղմեն ուժգին . զանի քու քովդ կ'քաշես և շուրթերդ կ'շարժես սրտէս թէ անոր կ'ուզես խօսիլ . իսկ զլուխն քեզի մօտ կ'բերեն այնպէս որ զգաս թէ անոր աղւոր մայկերն այսերդ կ'շօշախեն : « Բըղեակ իմ , սպարախ սիրել . . . քու մայրդ » :

Յանկարծ քու միւս ձեռնդ տրտի և ցնցող բուռն մը կ'զլայ և արասուքի նման բան մը երեսիդ վրայ կ'հոսի : Տէր Աստուած , արդեօք արդարեւ արածար մ'է :

Գուն կ'գործես նայուածքդ սրելու և տկար ժպիտ մը կերպարանիդ վրայ կ'սահի երբ կարծես թէ ներա երեսը կ'նշմարես . . . կենդանաւորին երեսը . . . որ քու վրայ կ'ծօխ , և սրտիդ մէջ թունտ մը կ'ըզդաս , փեսայութեան առաւօտն զլայած թունդիդ նման , նման այն թունդին զոր սովոր էիր զգալ կենացի գարնան ժամանակը :

Սրտի թունդ մը միայն ուժեղ ու բեցուն , ու այլ ոչ ինչ :

Իմ զլանիկս անցաւ : Եթէ կամէի , դարձեալ չախի կարենայի զայն վառել . բոլորովին հատեր էր :

«Անթառամ՝ մօբբոյրս» լրի , երբ ընթերցումս աւարտեցի «Հիմակ հրաման սլախ տաւ որ վարդենիին ներքեւ ծխեմ» : Անթառամ՝ որ գործը վար դրեր էր մտիկ ընելու համար , ժպտեցաւ , արտօսք մը սրբեց և ըստ . « Այն , Իսահակ » և տպա իր ասեղով ծոծրակը քերելէն ետեւ՝ նորէն զուլայան առաւ գործելու համար :